

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իրավագիտության ֆակուլտետ

ԴԱՎԻԹ ՄԱՐԱՏԻ ՍԵՐՈԲՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔ
ՊԱՐՏԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ուսումնական ձեռնարկ

Խմբագիր՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյան

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2017

ՀՏԴ 347 (479.25) (075.8)
ԳՄԴ 67.99 (22) 3գ73

**Երաշխավորվել է տպագրության ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետի գիտական
խորհրդի 15.07.2002 թ. որոշմամբ**

**ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ. ՊԱՐՏԱՎՈՐԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔ/ Դավիթ Մարատի Սերոբյան: Խմբ.՝ Վ. Դ.
Ավետիսյան:– Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 276 էջ:**

Ձեռնարկում համակարգված, ամբողջական տեքստով և սլայդերի (լուսապատկերների) միջոցով շարադրված է «Քաղաքացիական իրավունք» դասընթացի «Պարտավորական իրավունք» բաժինը, բացառությամբ պայմանագրերի առանձին տեսակների: Աշխատանքում ներկայացվում է պարտավորության հասկացությունը, պարտավորությունների ծագման հիմքերը, պարտավորական իրավունքի համակարգը, պարտավորությունների սուբյեկտները, օբյեկտները և բովանդակությունը, քաղաքացիաիրավական պայմանագրի հասկացությունը և նշանակությունը, բովանդակությունը, պայմանագրերի դասակարգումը, դրանց կնքման, փոփոխման և լուծման կարգը: Ձեռնարկում ներկայացվում է նաև պարտավորությունների կատարումը, պարտավորությունների կատարման ապահովումը, պատասխանատվությունը պարտավորությունների խախտման համար, պարտավորությունների դադարումը: Աշխատանքում առանձնակի կարևորվում են ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները պարտավորական հարաբերություններում:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է Հայաստանի Հանրապետության բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար: Այն կարող է օգտակար լինել նաև դատական, դատախազական մարմինների աշխատողների, փաստաբանների, քաղաքացիական իրավունքի հարցերով հետաքրքրվող քաղաքացիների ու կազմակերպությունների համար:


ՀՏԴ 347 (479.25) (075.8)
ԳՄԴ 67.99 (22) 3գ73

ISBN 978-5-8084-2241-4

© Սերոբյան Դ, 2017

ԸՂՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ,
ՏԵՍԱԿՆԵՐԸ և ՏԱՐՐԵՐԸ



Գույքի փոխանցման, աշխատանքների կատարման
ծառայությունների մատուցման, դրամի վճարման
կամ որոշակի գործողությունների կատարումից
ձեռնպահ մնալու հետ կապված հասարակական
հարաբերությունները ընդունված է անվանել
պարտավորական հարաբերություններ, իսկ դրանք
կարգավորող իրավական նորմերի համակցությունը՝
պարտավորական իրավունք

- Պարտավորական իրավունքն ընդգրկում է
ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի մի քանի բաժիններ

- Պարտավորությունների միջոցով ձևավորվում են
բազմապիսի և բազմաթիվ հարաբերություններ

- Պարտավորական հարաբերություններն օրենսդիրը
կարգավորում է որոշակի համակարգով

*Ընդհանուր դրույթներ
պարտավորությունների
մասին*

*Պարպավորությունների
առանձին տեսակներ*

*Պայմանագրերից բխող
/պայմանագրային /*

*Պայմանագրերից չբխող
/արտապայմանագրային /*



*Պարտավորության ուժով մի անձը
(պարտապանը) պարտավոր է մեկ այլ
անձի (պարտատիրոջ) օգտին կատարել
որոշակի գործողություն, այն է՝ վճարել
դրամ, հանձնել գույք, կատարել աշխա-
տանք, մատուցել ծառայություն և այլն*

*կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողության կատարումից,
իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից
պահանջել կատարելու իր պարտականությունը /ՀՀ Քաղ.
օր-ի հոդ. 345/*

- ✓ Քաղաքացիական իրավահարաբերության տեսակներից մեկն է
- ✓ Ձևավորվում է որոշակի անձանց միջև /կողմերի/
- ✓ Հարաբերական, իրավագոր անձի պահանջի իրավունք
- ✓ գույքային իրավահարաբերություն է/առուծախ, կապալ/
- ✓ կարող են կատարվել նաև գույքային բնույթ չունեցող
գործողություններ, օրինակ հեղինակի կողմից ազդօրինակում
սխալները, վրիպակները ողղելը

Պարտավորական հարաբերությունները տարբերվում են սեփականության հարաբերություններից

սեփականության

կապված են որոշակի
անձանց գույքի պատ-
կանելության հետ

բացարձակ

իրավագործություններ
ի բովանդակությունը
որոշվում է օրենքով



Պարտավորական

միջնորդավորում են
գույքային բարիքների
փոխանցումը

հարաբերական

իրավունքները
ծագում են կողմերի
համաձայնությունից

*սեփականատերն
իրավագործություններն
իրականացնում է
ինքնուրույնաբար,
անկախ որևէ անձի
կամքից*



*պարտատերը իր իրա-
վունքները կարող է
իրականացնել, երբ
պարտապանը
կատարի
պարտականությունը*

*պարտավորական
հարաբերությունները
աժանցյալ են
սեփականության
հարաբերություններից*

*սեփականության
հարաբերությունների
առաջացումը
հանդիսանում է
պարտավորական
հարաբերությունների
զարգացման արդյունք*



ՊԱՐՏԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐՆ ԵՆ



ՊԱՐՏԱՏԵՐ

ՊԱՐՏԱՊԱՆ

Որոշ պարտավորություններում մասնակիցներից մեկը միայն պարտատեր է, մյուսը պարտապան /դեբիտ/

Պարտավորությունների մեծամասնությունում մասնակիցներից յուրաքանչյուրը և պարտատեր է, և պարտապան /առուծախ/


Պարտավորության սուբյեկտ կարող են լինել պետությունը, վարչատարածքային կազմավորումները, իրավաբանական և ֆիզիկական անձինք

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ
հանդիսանում է այն ամենը ինչի կապակցությամբ
առաջանում են այդ հարաբերությունները



իրերը...

ստեղծագործական աշ-
խատանքի արդյունք...



ծառայությունները

աշխատանքի արդյունք...



Պարտավորության բովանդակությունը



այն իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որը ձեռք են բերում պարտատերն ու պարտապանը, օրինակ առուծախի դեպքում...

Սանկցիան



այն անբարենպաստ հետևանքն է, որը կիրառվում է պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պարտավորությունը խախտող կողմի նկատմամբ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ



Ըստ ծագման հիմքերի



պայմանագրային

արտապայմանագրային

*պարտավորության
բովանդակությունը
կազմող իրավունքներն ու
պարտականությունները
որոշվում է ոչ միայն
օրենքով, այլև
մասնակիցների
համաձայնությամբ*

*իրավունքներն ու
պարտականությունները
կանխորոշվում են միայն
օրենքով և
իրականացումը կախված
է մասնակիցներից մեկի՝
տուժողի կամքից*

**Պարտավորության բովանդակության
առանձնահատկությունից ելնելով**

պարզ

բարդ

երկնարելի

ՊԱՐԶ պարտատերը միայն իրավունք ունի, պարտապանը
միայն պարտականություն - օրինակ, փոխառություն

ԲԱՐԴ երկու կողմերն էլ ունեն թե իրավունքներ, թե
պարտականություններ - օրինակ, առուծախ

ԵՐԿՆԱՐԵԼԻ պարտապանին իրավունք է վերապահվում, իր
ընտրությամբ կատարել պարտավորության առարկա
հանդիսացող գործողություններից որևէ մեկը
/ՀՀ քաղ. օր-ի 359 հոդ./

դրական գործողությամբ
կատարվող պարտավորու-
թյուններ

բացասական
գործողությամբ կատարվող
պարտավորություններ



որոշակի գործողություն
կատարի
/մատակակարում/

ձեռնպահ մնա որոշակի
գործողություններ
կատարելուց /հեղինակը
պայմանագիր չկնքի/

գլխավոր և լրացուցիչ

վերաբերում են բուն
հարաբերության
կարգավորմանը /վարկ/

կապված են գլխավոր
պարտավորության հետ
ապահովում են նրա
կատարումը /գրավ/

Անձնական պարտավորություններ

- անմիջականորեն կապված են պարտատիրոջ կամ պարտապանի անձի հետ
- պարտավորական իրավունքի շատ կանոններ դրանց վրա չեն տարածվում
- չի թույլատրվում պահանջը զիջել, երե այն կապված է պարտատիրոջ անձնավորության հետ/հոդ. 398/
- չի թույլատրվում զիջել առողջությունը վնասելու կամ մահ պատճառելու հետևանքով առաջացած վնասի հատուցման պահանջը
- կողմերից մեկի մահվան դեպքում պարտավորությանը դադարում է

imagestate



imagestate




ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

իրավաբանական փաստ /կազմ/

*Քաղ. օր. 345h. առանձնակի ընդգծում է
պայմանագիրը և վնաս պատճառելը*

պարտավորությունների առաջացման հիմք են նաև



վարչական
ակտեր

ՊԵՏԱԿԱՆ և ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆՔԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԱԿՏԵՐԸ



Պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնի կողմից ընդունված անհատական այն ակտն է, որն ուղղված է քաղաքացիական իրավա- հարաբերություններ ստեղծելուն, փոփոխելուն և դադարեցնելուն

- ✓ որպես կանոն հանդիսանում են պայմանագրի կնքման հիմք
- ✓ կանխորոշում են պարտավորության բովանդակությունը
- ✓ պարտավորական հարաբերություններ են առաջացնում իրավաբանական անձանց, նրանց և քաղաքացիների միջև

**ԱՎԴՅ/0042/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ
դատարանի 04.03.2011թ. որոշում**

ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ պարտավորագիրը պարտապանի կողմից ի հավաստումն պարտավորության տրված **պարտքային փաստաթուղթ** է, որով պարտապանն ընդունում է իր պարտքը պարտատիրոջ հանդեպ:

**ԵԱԴԴ/0501/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ
դատարանի 17.07.2015 թվականի որոշում**

Պարտավորագիրը, որպես կանոն, կազմվում է կողմերի միջև առկա իրավահարաբերությունը դադարելիս փոխադարձ հաշվարկների արդյունքում՝ մի կողմի մյուսի հանդեպ որոշակի պարտավորության ստանձմամբ կամ պարտքի ճանաչման դեպքում: Պարտավորագրի պարագայում էականը կողմի կամահայտնության դրսևորումն է՝ անկախ դրան նախորդած այս կամ այն իրադարձությունից կամ փաստական հանգամանքից: Այն դեպքում, երբ այդպիսի կամահայտնությունը ստացել է գրավոր ամրագրում, և առկա չէ որևէ ապացույց, որն ակնհայտորեն հաստատում է որևէ այլ կամահայտնության դրսևորման փաստ, **պարտավորագիրն ինքնին հանդիսանում է պարտավորության ծագման հիմք** և այդ փաստը հաստատող բավարար ապացույց:

ԵԿԴ/1447/02/12 քաղ. գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014
թ. որոշում

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտավորական
իրավահարաբերությունների ծագման հիմք կարող է
հանդիսանալ նաև լիազորագիրը, քանի որ այն միակողմ գործարք
է, որը ներկայացուցչին պարտավորեցնում է գործել դրանում
սահմանված լիազորությունների շրջանակում, և ներկայացվողի
անունից գործելու իրավունք է վերապահում այն պահից, երբ
ներկայացուցիչը համաձայնվում է ստանալ լիազորագիրը և/կամ
գործել դրանում սահմանված լիազորություններին
համապատասխան: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի
347-րդ հոդվածի ուժով ներկայացուցիչը պարտավոր է պատշաճ
իրականացնել լիազորագրով ստանձնած լիազորությունները
պարտավորությունները, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ
կատարման պարագայում վերջինս իր վրա կրում է դրա
արդյունքում առաջացած անբարենպաստ հետևանքների, այդ
թվում նաև՝ պատճառված վնասի ոհսկը:

ԼՂ/0423/02/08 քաղ. գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թ.
որոշում

ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական
դիրքորոշումը, որ ըստ էության հանդիսանալով միակողմանի
գործարք՝ լիազորագիրը լիազորվողի (պարտապանի) մոտ
առաջացնում է միայն որոշակի պարտավորություններ, նախ՝
լիազորողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև,
երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված
հանձնարարությունը, իսկ լիազորողի (պարտատիրոջ) համար
սահմանում է միայն որոշակի իրավունք՝ լիազորվողից
պահանջել կատարելու լիազորագրով ստանձնած
հանձնարարությունը (պարտավորությունը): Ընդ որում, միայն
լիազորագրով ստանձնած հանձնարարությունը կատարված
լինելու դեպքում է պարտավորությունը դիտվում պատշաճ
կատարված, իսկ պարտավորությունը՝ դադարած:

ՈՉ ԻՐԱՎԱԶԱՓ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (դելիկատներ)

ուրիշի անձին կամ գույքին
վնաս պատճառելը

(ՀՀ քաղ. օր-ի 1058 հոդ.)



անհիմն հարստացում

*Անձը, ով առանց օրենքով, այլ
իրավական ակտերով կամ
գործարքով սահմանված
հիմքերով ուրիշ անձի
(տուժողի) հաշվին ձեռք է
բերել կամ խնայել է գույք,
պարտավոր է տուժողին
վերադարձնել անհիմն ձեռք
բերածը կամ խնայածը /ՀՀ
Քաղ.օր-ի 1092 հոդ./*

Պարտավորական հարաբերություններ կարող են առաջանալ նաև

- ❖ Քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտերից /հոդ. 10/
- ❖ Քաղաքացիների և կազմակերպությունների այլ գործո - դությունների հետևանքով. Օրինակ, գտանք գտնելու հոդ. 182, գանձ հայտնաբերելու հոդ. 186/ և այլն
- ❖ Այն գործողություններից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ

ԱՆՁԱՆՑ ԲԱԶՄԱԹՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Երբ պարտավորության կողմերից մեկում կամ երկու կողմերում հանդես են գալիս երկու և ավելի անձինք, այդպիսի պարտավորությունները համարվում են աձանց բազմաթվությամբ պարտավորություններ

Այդպիսի պարտավորությունները կարող են լինել՝ ակտիվ, պասիվ և խառը

**ԱԿՏԻՎ
ԲԱԶՄԱԹՎՈՒԹՅԱՄԲ**

- մի քանի պարտատեր
մեկ պարտապան

*բոլոր պարտատերերը միասին կամ նրանցից
յուրաքանչյուրը իրավունք ունի
պարտապանից կատարում պահանջելու*



ՊԱՍԻՎ ԲԱԶՄԱԹՎՈՒԹՅԱՄԲ

- մեկ պարտատեր մի քանի
պարտապան



*պարտատերն իրավասու է
կատարում պահանջել ինչ-
պես բոլոր պարտապաններ-
ից, այնպես էլ նրանցից
յուրաքանչյուրից*



ԽԱՌԸ ԲԱԶՄԱԹՎՈՒԹՅԱՄԲ

- պարտավորության յուրաքանչյուր
կողմում մասնակցում են երկու և ավելի



*բոլոր պարտատերերը կամ նրանցից
յուրաքանչյուրը իրավունք ունի
պարտավորության կատարում պա-
հանջել ինչպես բոլոր պարտապան-
ներից այնպես էլ նրանցից յուրաքան-
չյուրից*



*ԱՆՁԱՆՑ ԲԱԶՄԱԹՎՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ
ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒՆԻ ՈՐՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ և ԿՐՈՒՄ Է
ՈՐՈՇԱԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

ԱՆՁԱՆՑ ԲԱԶՄԱԹՎՈՒԹՅԱՄԲ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱԺՆԱՅԻՆ

ՀԱՄԱՊԱՐՏ

ԼՐԱՑՈՒՑԻՉ

ԲԱԺՆԱՅԻՆ են կոչվում այն պարտավորությունները, որոնց մասնակցում են երկու կամ ավելի պարտատեր կամ պարտապան և նրանցից յուրաքանչյուրի պահանջի իրավունքը կամ պարտավորությունը կատարելու բաժինը որոշակի է

Պարտապաններից յուրաքանչյուրը պարտավոր է այն կատարել մյուսների հետ հավասար բաժիններով, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտից կամ պարտավորության էությունից

ԲԱԺՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ պարտատերը յուրաքանչյուր պարտապանից կարող է պահանջել միայն այն բաժինը, որը պարտավոր է կատարել այդ պարտապանը
- ✓ յուրաքանչյուր պարտատեր կարող է պահանջել միայն իրեն հասանելիք բաժինը
- ✓ պարտապաններից մեկի կողմից պարտավորության իր բաժինը կատարելը պարտավորությունը չի դադարեցնում; Պարտավորությունը չկատարված մասով պահպանվում է մինչև յուրաքանչյուրի կողմից իրեն հասանելիք մասի կատարումը

ՀԱՄԱՊԱՐՏ են համարվում այն պարտավորությունները, որոնց մասնակցում են երկու կամ ավելի պարտատեր կամ պարտապան և պարտատերը (պարտատերերը) իրավունք ունի ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից առանձին պահանջել կատարելու պար-տավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով /ՀՀ քաղ. օր-ի հոդ. 362/

- ✓ *բաժնային պարտավորության պարտապանը գտնվում է ավելի բարվոք վիճակում*
- ✓ *համապարտ պարտավորություններում նախընտրելի վիճակում է պարտատերը*
- ✓ *համապարտությունն ինքնին չի ենթադրվում*
- ✓ *համապարտ պարտավորությունը ծագում է եթե նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով*

Ըստ ՀՀ քաղ. օր-ի համապարտ են՝
այն պարտավորությունները, որոնց
առարկան անբաժանելի իր է 361
հոդ.



մի քանի գործարարների միասին
ստանձնած պարտավորություններ
361 հոդ.



համատեղ վնաս պատճառած
անձանց պարտավորությունները
1073 հոդ.



Համապարտությունը լինում է

ակտիվ
մի քանի
պարտատեր մեկ
պարտապան

պասիվ
մի քանի
պարտապան մեկ
պարտատեր

խառը

*ակտիվ համապարտության /համիրավ պահանջ/ դեպքում
պարտավորությունը դադարում է, եթե պարտապանը լրիվ
ծավալով կատարում է պարտավորությունը
պարտատերերից մեկի օգտին*

➤ լրիվ ծավալով բավարարում ստացած պարտատերը
պարտավոր է մյուսներին հանձնել նրանց բաժինները

➤ մինչև պարտատերերից մեկի կողմից պահանջ
ներկայացնելը պարտապանն իրավունք ունի իր
հայեցողությամբ կատարել պարտավորությունը
պարտապաններից ցանկացածի հանդեպ

➤ պարտապանն իրավունք չունի համիրավ
պարտատերերից մեկի պահանջի դեմ անել այնպիսի
առարկություններ, որոնք հիմնված են հարաբերություն-
ների վրա, որոնց տվյալ պարտատերը չի մասնակցել

Պատիվ համապարտության

համապարտության դեպքում
պարտավորությունը դադարում է, երբ
պարտապաններից մեկը կատարում է
ամբողջ պարտավորությունը

➤ Համապարտ պարտապաններից մեկից լրիվ բավարարում
չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը
պահանջել մյուս պարտապաններից

➤ Համապարտ պարտապանները պարտապան են մնում
այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ
չի կատարվել

➤ Պարտապանն իրավունք չունի պարտատիրոջ պահանջ-
ների դեմ անել այնպիսի առարկություններ, որոնք
հիմնված են մյուս պարտապանների և պարտատիրոջ
այն հարաբերությունների վրա, որոնց ինքը չի
մասնակցել



Պասիվ համապարտության դեպքում պարտապաններից մեկի կոցմից պարտավորությունը լրիվ կատարելը մնացած պարտապաններին ազատում է պարտատիրոջ հանդեպ պարտավորությունը կատարելուց



Եթե այլ բան չի բխում համապարտ պարտապանների հարաբերություններից



համապարտ պարտավորությունը կատարած պարտապանը, մնացած պարտապանների նկատմամբ ունի հավասար բաժիններով հետադարձ պահանջի իրավունք՝ հանելով իր բաժինը



համապարտ պարտապաններից մեկի չկատարածը հավասար բաժիններով ընկնում է չկատարած պարտապանի և մյուս պարտապանների վրա /հ. 364/

ՍՈՒԲՍԻԴԻԱՐ
(լրացուցիչ)
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ծագում է այն դեպքում, երբ հիմնական պարտապանի հետ միասին, օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում, կատարման պարտականություն է կրում լրացուցիչ սուբյեկտ

բայց միայն այն չափով, որ չափով պարտավորությունը չի կատարվել հիմնական պարտապանի կողմից

✓ պարտատերը պահանջը պետք է ներկայացնի հիմնական պարտապանին

• հիմնական պարտապանը հրաժարվում է

• բանական ժամկետում պահանջին չի պատասխանում

Պարտապանն իրավունք չունի հիմնական պարտապանին
նուղված իր պահանջի բավարարումը պահանջել
սուբսիդիար պատասխանատվություն կրող անձից, եթե այդ
պահանջը կարող է բավարարվել հիմնական պարտապանի
դեմ նուղված հակընդեմ պահանջի հաշվանցումով
/ՀՀ քաղ. օր-ի 415 հոդ./

*Սուբսիդիար պարտավորությունը կատարող անձը
իրավունք չունի իր կատարումը հետադարձ պահան-
ջով ստանալ հիմնական պարտապանից, բացի
օրենքով նախատեսված դեպքերից
/ծնող, որդեգրող---- երաշխավոր/*

Պարտավորությունը սուբսիդիար կարող է լինել միայն
օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում
/14-18 տարեկանի պատճառած վնասը, լիակատար
ընկերակցության մասնակից, երաշխավոր/

ԱՆՁԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

imagestate



Պարտավորության մեջ անձերի փոփոխության դեպքում պարտավորությունը չի դադարում, տեղի է ունենում իրավահաջորդություն, այսինքն սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների փոխանցում մեկ անձից մյուսին

imagestate



*Պարտատիրոջ փոփոխությունը
պահանջի զիջում*

*Պարտապանի փոփոխությունը
պարտքի փոխանցում*

*սկզբնական պարտատեր
/ցեղենտ/*

*պահանջի
զիջում
ցեսիա*

*նոր պարտատեր
/ցեսիոնար/*

Պահանջի զիջում
ցեսիա

*պարտատերը պահանջը այլ անձի
կարող է զիջել այն դեպքում, եթե դա չի
հակասում օրենքին կամ
պայմանագրին
/ստացական/*

**ՀՀ քաղ. օր-ի 402 հոդ. համաձայն պարտատիրոջ իրավունքները
կարող են այլ անձի անցնել օրենքի հիման վրա**

1. պարտատիրոջ իրավունքների ընդհանուր իրավահաջորդու-
թյան հետևանքով,
2. պարտատիրոջ իրավունքներն այլ անձի փոխանցելու մասին
դատարանի վճռով,
3. պարտապանի երաշխավորի կամ այդ պարտավորությամբ
պարտապան չհանդիսացող գրավատուի կողմից պարտավորու-
թյան կատարման հետևանքով,
4. ապահովագրական դեպքը վրա հասնելիս պատասխանատու
պարտապանի նկատմամբ պարտատիրոջը ապահովագրական
հատուցում վճարած ապահովագրողին անցնելով

Պահանջը զիջելը օրենքով կարող է նաև արգելվել

ՀՀ քաղ. օր-ի 398 հոդ. չի թույլատրվում զիջել պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները՝ ներառյալ ալիմենտի և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջը

➤ Պահանջը զիջելու համար պարտապանի համաձայնությունը չի պահանջվում, բացառությամբ, երբ պարտապանի համար պարտատիրոջ անձը էական նշանակություն ունի

➤ Պահանջը զիջելու մասին համաձայնությունը պետք է կնքվի գործարքի համար սահմանված ձևով

➤ Պարտապանը պետք է գրավոր տեղեկացվի պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին

imagestate



➤ Պահանջը զիջած պարտատերը պարտավոր է նոր պարտատիրոջը հանձնել պահանջի իրավունքներն հաստատող փաստաթղթերը ...



➤ Սկզբնական պարտատիրոջ իրավունքները նոր պարտատիրոջն են անցնում գոյություն ունեցող ծավալով և պայմաններով

➤ Սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև պատասխանատու է պահանջը իրական լինելու համար /օրինակ փոխառություն/

➤ Պահանջի զիջումը պարտավորությունը չի նորոգում և նրա մեջ նոր պայմաններ չի մտցնում

Պարտապանն իրավունք ունի նոր պարտատիրոջ պահանջի դեմ ներկայացնել առարկություններ, որոնք նա ունեցել է սկզբնական պարտատիրոջ դեմ՝ նոր պարտատիրոջը իրավունքների անցման մասին ծանուցում ստանալու պահին:

Պարտքի փոխանցում

*սկզբնական պարտապանը դուրս է գալիս
պարտավորությունից և նրա փոխարեն
պարտավորության մեջ մտնում է նոր անձ,
որն իր վրա է վերցնում կատարումը*

Acclaim Images.com



- Պարտքն այլ անձի փոխանցել
թույլատրվում է միայն պարտատիրոջ
համաձայնությամբ
- Նախկին պարտապանը լրիվ ազատվում է
պարտավորությունից
- Երաշխավորությունը, գրավը դադարում են, եթե
երաշխավորը կամ գրավատուն չեն համաձայնվել
պատասխանատու լինել նոր պարտապանի համար
- Պարտքն այլ անձի կարող է փոխանցվել այն ձևով, ինչ
ձևով կնքված է գործարքը

ՌԵԳՐԵՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌԵԳՐԵՍԱՅԻՆ ԵՆ ԿՈՉՎՈՒՄ ԱՅՆՊԻՄԻ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՈՆՅ ՈՒԺՈՎ ՊԱՐՏԱՊԱՆԻ
ՄԵՂՔՈՎ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻՆ ԴՐԱՄ ՎՃԱՐԱԾ ԿԱՄ ԱՅԼ
ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԱԾ ԱՆՁՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՐՏԱՊԱՆԻՅ
ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎՃԱՐԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԿԱՄ ՀԱՆՁՆԱԾ
ԳՈՒՅՔԸ

ծագում են որպես հետևանք մեկ այլ պարտավորության
կատարման և ունեն անանցյալ բնույթ

առաջացման համար անհրաժեշտ է երրորդ անձի հետ
գոյություն ունեցող իրավահարաբերություն

➤ Ռեգրեսային պարտավորության պահանջի ծավալը որոշվում է նրա ածանցյալ բնույթով

ռեգրեսային պարտավորություններն առաջանում են ինչպես պայմանագրային, այնպես էլ արտապայմանագրային պարտավորություններով



սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց են

ՔԱՂԱՔԱՅԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Պայմանագրի հասկացությունը և նշանակությունը

Երկու կամ ավելի անձանց հակադիր կամ նույնանման նպատակների համնկնման վրա հիմնված համաձայնություն է, որն ուղղված է քաղաքացիական իրավահարաբերություններ առաջացնելուն փոփոխելուն կամ դադարեցնելուն



- ❖ պայմանագիրը պարտավորությունների առաջացման առավել տարածված և կարևոր հիմքերից է
- ❖ գործարքի տեսակ
- ❖ պայմանագրում մասնակցում են երկու և ավելի կողմեր



- ❖ պայմանագիրն իրավաբանական փաստ է

- ❖ պայմանագիրը կամային ակտ է,
- ❖ կողմերի կամավոր համաձայնություն, ազատ արտահայտեն իրենց կամքը

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

- ✓ ազատորեն պետք է լուծեն պայմանագիր կնքելու կամ չկնքելու հարցը
- ✓ /պարտադիր աուդիտ, գրավառուն ապահովագրում է գրավի առարկան/
- ✓ կատարել կողմի ընտրություն
- ✓ պայմանագրի պայմանների ընտրություն
- ✓ ընտրել պայմանագրի ցանկացած տեսակ
- ✓ կնքել տարբեր պայմանագրի տարբեր պարունակող /խառը/ պայմանագիր

Եթե պայմանագրի պայմանները նախատեսված են դիսպոզիտիվ նորմով, կողմերը կարող են սահմանել այլ պայման կամ բացառել դիսպոզիտիվ նորմի կիրառումը: Նման համաձայնության բացակայու-թյան դեպքում գործում է դիսպոզիտիվ նորմում սահմանված կանոնը

Պայմանագրի ազատությունը գործում է միայնօրինականության շրջանակներում



Պայմանագիրը պետք է համապատասխանի կնքման պահին գործող իմպերատիվ նորմերին

Թիվ ԵԲԴ/0318/02/08 քաղ. գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009թ. որոշում

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ պայմանագիրը կնքելուց հետո նոր օրենք ընդունվելու դեպքում կնքված պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, եթե ընդունված օրենքում ամրագրված չէ կողմերի համար սահմանված պարտադիր այլ կանոնների անմիջական կիրառումը նախկինում կնքված պայմանագրերի վրա:

Այսպիսով, օրենսդրի կողմից ըստ էության ամրագրվել է այն մոտեցումը, որ նախկինում կնքված պայմանագիրն իր պայմաններով գերակա է նոր ընդունված այն օրենքի նկատմամբ, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ: Դա իր հերթին որոշակի երաշխիք է ստեղծում պայմանագրի կողմերի համար և բացառում նրանց կամքից անկախ՝ նոր ընդունված օրենքով, պայմանագրի պայմանների փոփոխումը, որոնք գործել են պայմանագիրը կնքելու պահին և դրանց պահպանումը պարտադիր էր պայմանագիրը կնքող կողմերի համար:

CONTRACT

նշանակությունը

- ✓ տնտեսական շրջանառությունը միջնորդավորող հիմնական իրավական ձևն է
- ✓ նպատակների իրագործման յուրահաստուկ և ունիվերսալ միջոց է
- ✓ արտադրության և սպառման կապի միջոց է
- ✓ պայմանագրի միջոցով կողմերը բավարարում են իրենց պահանջմունքները
- ✓ պահանջարկի և առաջարկի ուսումնասիրման և կարգավորման միջոց է
- ✓ նյութական բարիքների օգտագործումն ապահովող միջոց

Պայմանագիրը նաև
հանդես է գալիս որպես
իրավահարաբերության
սուբյեկտների միջև
ծագած խնդիրների
առավել արդյունավետ
լուծման միջոց



ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ըստ իրավական արժեքորման

Հիմնական

Նախնական



Նախնական պայմանագրով կողմերը
պարտավորվում են ապագայում կնքել գույք
հանձնելու, աշխատանքներ կատարելու կամ
ծառայությունների մատուցելու մասին
պայմանագիր (հիմնական պայմանագիր)՝
նախնական պայմանագրով նախատեսված
պայմաններով:



Նախնական պայմանագիրը պետք է
պարունակի՝

- կետեր որոնք թույլ են տալիս սահմանել
հիմնական պայմանագրի առարկան
- Ժամկետ, որի ընթացքում կողմերը պարտավոր-
վում են կնքել հիմնական պայմանագիր
- եթե ժամկետ որոշված չէ, հիմնական
պայմանագիրը պետք է կնքվի....մեկ տարվա
ընթացքում



Թիվ ԵՄԴ/0720/02/10

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ պայմանագրերի իրավաբանական դասակարգման կամ պայմանագրերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված որոշակի պայմանագրերի տարրերի առկայության բացահայտումը մի քանի փուլերից բաղկացած գործընթաց է, որն իրենից ներկայացնում է պայմանագրի մեկնաբանության բաղկացուցիչ մաս: Մասնավորապես, պայմանագրի իրավաբանական դասակարգման համար պետք է՝

- ❑ պարզվեն տվյալ պայմանագրի պայմանները (առարկան, գինը, ձևը, կողմերի իրավունքների և պարտականությունների շրջանակը),
- ❑ դրանք համադրվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրերի վերաբերյալ ընդհանուր և կոնկրետ պայմանագրի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող հատուկ նորմերի հետ պայմանագրի տեսակը որոշելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագրերի իրավաբանական դասակարգման նկատմամբ կիրառելի են ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ (Քաղաքացիական իրավական նորմերի մեկնաբանումը), այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ (Պայմանագրի մեկնաբանումը) հոդվածով նախատեսված քաղաքացիական իրավունքի նորմերի և պայմանագրի մեկնաբանության վերաբերյալ հոդվածները:

- Նախնական պայմանագիրը կնքվում է հիմնական պայմանագրի համար սահմանված ձևով, իսկ եթե հիմնական պայմանագրի ձև սահմանված չէ գրավոր Նախնական պայմանագրի ձևի մասին կանոնը
չպահպանելը այն դարձնում է առոչինչ
Եթե նախնական պայմանագիր կնքած կողմը խուսափում է հիմնական պայմանագիրը կնքելուց, մյուս կողմն իրավունք ունի դատարան դիմել պայմանագիր կնքելուն հարկադրելու, ինչպես նաև խուսափելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու պահանջով



Նախնական պայմանագրով նախատեսված
պարտավորությունները դադարում են՝

երթե մինչև այն ժամկետի ավարտը, որում կողմերը
պետք է կնքեին հիմնական պայմանագիրը, այն չի
կնքվում

կողմերից մեկը մյուսին առաջարկ չի
ներկայացնում հիմնական պայմանագիր կնքելու
մասին

Մտադրությունների մասին համաձայնություն
(արձանագրություն)

լոկ արձանագրում է կողմերի ցանկությունը ապագայում
մտնել պայմանագրային հարաբերությունների մեջ
նախնական պայմանագրի ուժ կարող է ունենալ, եթե
կողմերը այդ մասին մատնանշել են...

Ըստ մասնակիցների միջև իրավունքների և
պարտականությունների բաշխման

ՄԻԱԿՈՂՄ

ԵՐԿԿՈՂՄ

տարբերել գործարքներից

ՄԻԱԿՈՂՄ

մի կողմը
օգտվում է միայն իրավունքներից
մյուսը՝ միայն
պարտականություններ ունի
Փոխառություն,
նվիրատվություն...



Երկկողմ

այն պայմանագրերը,
որոնցով փոխադարձ

իրացունքներ և
պարտականություններ են ստեղծվում
երկու կողմերի համար

Երրորդ անձի օգտին կնքված
պայմանագրեր



Քաղ. օր.
հոդ. 446

ՀՈԳՈՒՏ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ՈՐՈՒՄ ԿՈՂՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼ ԵՆ, ՈՐ ՊԱՐՏԱՊԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼ ՈՉ ԹԵ ՀՈԳՈՒՏ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ, ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԿԱՄ ՉՆՇՎԱԾ ԱՆՁԻ, ՈՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՐՏԱՊԱՆԻՑ ՊԱՀԱՆՁԵԼՈՒ ԻՐ ՕԳՏԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Երրորդ անձը ոչ անձամբ, ոչ էլ
ներկայացուցչի միջոցով չի
մասնակցում երկու կողմերի միջև
կնքված պայմանագրին, բայց այդ
պայմանագրով նրա համար

առաջանում են իրավունքներ


(անձնական ապահովագրության, ավանդի պայմանագրեր)



Երրորդ անձը պայմանագրի կողմ չէ

կողմերն իրավասու են փոփոխել կամ
լուծել իրենց կնքած պայմանագիրը

Երրորդ անձի կողմից իր իրավունքները
օգտվելու ցանկությունը պարտապանին
հայտնելու պահից՝



➤ իրավունք ունի պարտապանից պահանջել իր օգտին կատարելու պարտավորությունը

➤ կողմերն առանց երրորդ անձի համաձայնության չեն կարող լուծել կամ փոփոխել իրենց կնքած պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով:

Այն դեպքում, երբ երրորդ անձը հրաժարվում է պայմանագրով իրեն տրամադրված իրավունքից, պարտատերը կարող է օգտվել այդ իրավունքից, եթե դա չի հակասում օրենքին, այլ իրավական ակտերին և պայմանագրին:

Երրորդ անձի օգտին պայմանագիրը անհրաժեշտ է տարբերել այն դեպքերից, երբ պարտավորության կատարումը տեղի է ունենում հոգուտ երրորդ անձի

ՀԱՏՈՒՑԵԼԻ



ԱՆՀԱՏՈՒՅՑ


պայմանագրերի մեծ մասը

*նվիրատվություն, գույքը
ձրիաբար օգտագործել*

պահատվության, հանձնարարության

ԿՈՆՍԵՆՍՈՒԱԼ

ՌԵԱԼ



ՀԻՄՆԱԿԱՆ



ԼՐԱՑՈՒՑԻՉ



ԱԶԱՏՈՐԵՆ ԿՆՔՎՈՂ



ՊԱՐՏԱԴԻՐ ԿՆՔՎՈՂ



Հրապարակային է համարվում առևտրային կազմակերպության կնքած և ապրանքներ վաճառելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու նրա պարտականությունները սահմանող պայմանագիրը, որոնք այդ կազմակերպությունն իր գործունեության բնույթով պետք է իրականացնի յուրաքանչյուրի նկատմամբ, ով կդիմի իրեն (մանրածախ առևտուր, ընդհանուր օգտագործման տրանսպորտով փոխադրումն կապի ծառայություններ, էներգամատակարարում, հյուրանոցային սպասարկում և այլն)/հոդ.442/



Հրապարակային պայմանագիր կնքելու
դեպքում առևտրային կազմակերպությունն
իրավունք չունի

➡ որևէ անձի նախապատվություն տալ այլ
անձանց հանդեպ

➡ իրավունք չունի հրաժարվել հրապարակային
պայմանագրի կնքումից



Հրապարակային պայմանագրի կնքումից անհիմն խուսափելու դեպքում առևտրային կազմակերպությանը դատական կարգով կարող են հարկադրել ոչ միայն պայմանագիր կնքել, այլև վճարել այն վնասները, որը կրել է մյուս կողմը



Օրենքով նախատեսված դեպքերում կառավարությունը և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը կարող են հրապարակել հրապարակային պայմանագիր կնքելու և կատարելու վերաբերյալ կողմերի համար պարտադիր կանոններ /օրինակելի պայմանագրեր/



Կնքման ժամանակ կամքի դրսևորման

ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ

ՄԻԱՆԱԼՈՒ

պայմանագիր կնքելիս կողմերը ոչ միայն պայմանագիր կնքելու փոխադարձ լրացնող կամք են դրսևորում, այլև փոխադարձ կամահայտնությամբ համաձայնություն են կայացնում պայմանագրի բոլոր պայմանների կապակցությամբ



Միանալու է համարվում այն պայմանագիրը, որի պայմանները կողմերից մեկը սահմանել է բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով, իսկ մյուս կողմը դրանք կարող է ընդունել առաջարկվող պայմանագրին ամբողջությամբ միանալով:
(ՀՀ քաղ. օր-ի 444 հոդվ.)

Միանալու պայմանագիրը ունի հետևյալ առանձնահատկությունները՝

- Ֆորմուլյարը, այլ ստանդարտ ձևը մշակում է միանալու պայմանագիրն առաջարկող կողմը:
- Ֆորմուլյարը, այլ ստանդարտ պայմանագիրը հաստատման և մամուլում հրապարակելու կարիք չունի:
- Միացող կողմը պայմանագրի պայմանների որոշմանը մասնակցելու հնարավորություն չունի և առանձին պայմանների վերաբերյալ առարկություններ անելու իրավունք չունի:



Պայմանագրին միացող կողմն իրավունք ունի պահանջել լուծելու կամ փոփոխելու պայմանագիրը եթե՝

- այն միացող կողմին զրկում է նման տեսակի պայմանագրով սովորաբար տրվող իրավունքներից
- բացառում կամ սահմանափակում է մյուս կողմի պատասխանատվությունը
- պարունակում է մյուս կողմի համար այլ ակնհայտ ծանր պայմաններ, որոնք նա չէր ընդունի, եթե հնարավորություն ունենար մասնակցելու պայմանագրի պայմանների որոշմանը /հոդ.444/

**ԵԷԴ/0632/02/13 քաղ. գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թ.
որոշում**

ՀՀ քաղ.օր-ի 444-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունը հնարավորություն է տալիս ընդգծել միանալու պայմանագրի երկու հիմնական առանձնահատկությունն.

-միանալու պայմանագրի բոլոր պայմանները պետք է սահմանված լինեն **միակողմանի քանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով**: Ընդ որում, քանաձևային կամ այլ ստանդարտ ձևեր չեն կարող համարվել միասնական նմուշի ձևով (ձևաթղթով) կազմված պայմանագրերը, որոնք հաճախ օգտագործվում են քաղաքացիական շրջանառությունում, քանի որ նշված դեպքում պայմանագրի մյուս կողմը իրավունք ունի և կարող է իր անհամաձայնությունը հայտնել պայմանագրի առանձին դրույթների կամ ամբողջ պայմանագրի նկատմամբ, ինչի արդյունքում պայմանագրի պայմանները ենթակա կլինեն սահմանման ընդհանուր կանոնի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ: Մինչդեռ միանալու պայմանագրի դեպքում պայմանագրի բոլոր պայմանները սահմանելու իրավունքն անվերապահորեն տրամադրված է դրա **միայն մի կողմին**,

- մյուս կողմը պայմանագրի արդեն իսկ սահմանված պայմանները կարող է ընդունել ոչ այլ կերպ, քան առաջարկվող պայմանագրին **ամբողջությամբ միանալով**, ինչը նշանակում է, որ միանալու պայմանագրի դեպքում բացառվում է կողմերի համաձայնությամբ պայմանագրի՝ ստանդարտ ձևում նշված պայմաններից տարբերվող այլ պայմանների ձևակերպումը, իսկ միացող կողմի համար բացառված է սահմանված պայմանների նկատմամբ անհամաձայնություն հայտնելու հնարավորությունը: Վերջինս կարող է արդեն սահմանված պայմաններն ամբողջությամբ ընդունել կամ չընդունել, և ըստ այդմ, միանալ կամ չմիանալ պայմանագրին:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ և ՁԵՎԸ

Բովանդակությունն ասելով նկատի է ունեցվում այն անհրաժեշտ կետերը, որոնք նախատեսում են պայմանների առանց որոնց պայմանագիրը չի կարող գոյություն ունենալ

Էական

Պատահական

Սովորական

ԷԱԿԱՆ են համարվում բոլոր այն (պայմանները) կետերը, որոնց առկայությունը տվյալ պայմանագրում անհրաժեշտ է, և պայմանագիրը կնքված կարող է համարվել միայն այն դեպքում, եթե համաձայնություն է կայացվել բոլոր այդ պայմանների շուրջ

ԷԱԿԱՆ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

- որոնք այդպիսիք են համարվել օրենքով
- անհրաժեշտ են տվյալ պայմանագրի համար
- կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի

ՍՈՎՈՐԱԿԱՆ են համարվում այն կետերը,
որոնց բովանդակությունը համապատասխանում
է օրենքի դիսպոզիտիվ նորմի բովանդակությանը

Պայմանագրում սովորական պայմանների
մտցնելը կամ չմտցնելը նրա բովանդակության
վրա չի ազդում
/վարձակալված գույքի հիմնական վերանորոգում/

*ՊԱՏԱՀԱԿԱՆ են համարվում պայմանագրի այն
կետերը, որոնցով կողմերը բացառում են
դիսպոզիտիվ նորմի կիրառությունը կամ հարա-
բերությունները կարգավորում են այլ կերպ, քան
նախատեսված է դիսպոզիտիվ նորմում*

Պայմանագրի ձևը

- Պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ
- Եթե կողմերը պայմանավորվել են պայմանագիրը կնքել որոշակի ձևով, ապա այն կնքված է համարվում դրան պայմանավորված ձև տալուց հետո, թեկուզև պայմանագրի տվյալ տեսակի համար այդ ձևը օրենքով չի պահանջվում
- Պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից



Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս, եթե օրենքով նման պայմանագրի ձևի վերաբերյալ այլ պահանջ սահմանված չէ, էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ անձի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը:

Պայմանագրի կարող է նաև կնքվել՝ կոնկլյուդենտ գործողություններ կատարելու միջոցով

Պայմանագրի գրավոր ձևը պահպանված է համարվում, եթե օֆերտա ստացած անձի կողմից դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում դրանում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկվել (ապրանքներ բեռնել, աշխատանքներ կատարել, ծառայություններ մատուցել, համապատասխան գումար վճարել և այլն)

ԵԱԲԴ/1246/02/09 քաղ. գործով ՀՀ վճռաբեկ դատարանի
27.05.2011թ. որոշումը

Նախավճարի պայմանագիր կնքելով հաստատվում է հիմնական պայմանագրի կնքված լինելու հանգամանքը՝ կատարելով նաև պայմանագրի կատարման ապահովման գործառույթ, ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ այլ է իրավիճակն անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի դեպքում: Մասնավորապես, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի դեպքում հիմնական պայմանագիրը կարող է կնքվել **միայն օրենքով նախատեսված ձևով և պայմաններով**, հետևաբար, նախավճարի պայմանագիրը չի կարող որակվել որպես հիմնական առուվաճառքի պայմանագրի կնքման ապացույց:

Անիմաստ է դառնում նաև նախավճարի պայմանագրի կնքումը հիմնական պայմանագրի կնքումից հետո, քանի որ օրենքով նախատեսված ձևով և կարգով կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի առկայության դեպքում այն չի ծառայելու նախավճարի ինստիտուտի կարգավորման նպատակներին, այն է՝ ապացուցողական գործառույթին, քանզի հիմնական պայմանագրի առկայությունն ինքնին դրա կնքման ապացույց է: Միևնույն ժամանակ այն չի ծառայելու նաև պայմանագրի կատարման ապահովման գործառույթին, քանի որ հենց հիմնական պայմանագիրը բավարար է դրա կատարումն ապահովելու համար:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

- Պայմանագրի կատարումը վճարվում է կողմերի համաձայնությամբ սահմանված գնով
- Օրենքով նախատեսված դեպքերում կիրառվում են լիազորված պետական մարմինների կողմից սահմանված կամ կարգավորված գները (սակագները, վարձաչափերը, դրույքները և այլն)
- Պայմանագրի կնքումից հետո դրա գինը թույլատրվում է փոփոխել պայմանագրով կամ օրենքով նախատեսված դեպքերում և պայմաններով
- Այն դեպքերում, երբ հատուցելի պայմանագրում գին նախատեսված չէ և չի կարող որոշվել պայմանագրի պայմանների հիման վրա, պայմանագրի կատարումը պետք է վճարվի այն գնով, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

Պայմանագրի կնքման կարգ ասելով հասկանում ենք պայմանագրային հարաբերության մասնակիցների կամքի համաձայնեցման և ձևակերպման ընթացակարգը



Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնությունն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների բերաբերյալ

Պայմանագրի կնքման ժամանակ առկա է երկու փուլ

ՕՖԵՐՏԱ

ԱԿՅԵՊՏ

Օֆերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ

Օֆերտան պետք է պարունակի պայմանագրի էական պայմանները

Օֆերտան կաշկանդում է ուղարկող անձին՝ այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից

Օֆերտայի անհետկանչելիությունը

- Հասցեատիրոջ ստացած օֆերտան չի կարող հետ կանչվել դրա ակցեպտի համար օֆերտայում սահմանված ժամկետում, եթե այլ վերապահում չկա օֆերտայում, կամ չի բխում առաջարկի էությունից կամ այն իրավիճակից, որում այն արվել է:
- Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս օֆերենտն ու ակցեպտանտն ունեն օֆերտայում կամ ակցեպտում իրենց վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ճշտման իրավունք, պայմանով, որ այն իրականացվի վրիպակի, գրասխալի կամ թվաբանական սխալի հայտնաբերման պահից անհապաղ, և մյուս կողմը չի ձեռնարկել պայմանագրի կատարմանն ուղղված գործողություն (ապրանքներ բեռնել, աշխատանքներ կատարել, ծառայություններ մատուցել, վճարում կատարել և այլն), որը հանգեցրել է ծախսերի

օֆերտա ↔ օֆերտա անելու հրավեր /բնակարանի վաճառք/

Որոշակի դեպքերում, կախված առաջարկության
և առաջարկողի գործունեության բնույթից,
ընդհանուրին արված առաջարկը կարող է
համարվել օֆերտա անելու հրավեր կամ
հրապարակային օֆերտա

Գովազդը և անձանց անորոշ
շրջանակին հասցեագրված այլ
առաջարկը համարվում է օֆերտա
անելու հրավեր, եթե ուղղակիորեն
այլ բան նշված չէ առաջարկում



Հրապարակային օֆերտա է համարվում
պայմանագրի բոլոր էական պայմանները պարունակող
այն առաջարկը, որից հետևում է առաջարկում նշված
պայմաններով յուրաքանչյուր արձագանքողի հետ
պայմանագիր կնքելու առաջարկ անողի կամքը:
/խանութ/



Օֆերտան կարող է արվել

Ներկա գտնվող անձին
առանց ակցեպտի համար
ժամանակ նշելու
պատասխանի համար
ժամանակ տալով,
ժամկետը խախտելու
դեպքում հատուցում է
վնասները

Բացակա անձին
հեռագրով, նամակով,
հեռախոսագրով
առանց պատասխանի համար
ժամանակ նշելով՝ սպասել
պատասխանին այնքան,
որքան անհրաժեշտ է
սովորական պայմաններում
պատասխանը ստանալու
համար



*Օֆերտան համարվում է չուղարկված,
երթե նրա հետկանչի մասին
ծանուցում ստացվել է օֆերտայից
առաջ կամ դրա հետ միաժամանակ*

*Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող
կապի միջոցով պայմանագիր կնքելիս օֆերտան
համարվում է ստացված այն պահից, երբ այն
մուտք է գործում հասցեատիրոջ կողմից նշված
տեղեկատվական համակարգ, կամ հայտնաբերել
է հասցեատերը, եթե այն ուղարկվել է նրա կողմից
չնշված տեղեկատվական համակարգին*

ԱԿՑԵՊՏ

Ակցեպտն առաջարկն ընդունելու մասին այն անձի պատասխանն է, ում հասցեագրված է օֆերտան

Օֆերտա ստացած անձի կողմից դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում դրանում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելը (ապրանքներ բեռնելը, աշխատանքներ կատարելը, ծառայություններ մատուցելը, համապատասխան գումար վճարելը և այլն) համարվում է ակցեպտ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ նշված չէ օֆերտայում



Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս ակցեպտը համարվում է ստացված այն պահից, երբ օֆերտայում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելու վերաբերյալ էլեկտրոնային ծանուցումը մուտք է գործում օֆերտա ուղարկած անձի կողմից նշված տեղեկատվական համակարգ, կամ այն հայտնաբերել է օֆերտա ուղարկած անձը, եթե այն ուղարկվել է նրա կողմից չնշված տեղեկատվական համակարգին

Ակցեպտ

- եթե օֆերտա ուղարկած անձն ակցեպտի հետկանչի մասին ծանուցումն ստացել է ակցեպտից շուտ կամ դրա հետ միաժամանակ, ապա ակցեպտը համարվում է չստացված
- ակցեպտը պետք է լինի լրիվ և անվերապահ
- լռությունն ակցեպտ չէ, եթե այլ բան չի բխում օրենքից, գործարար շրջանառության սովորույթից կամ կողմերի նախկին գործարար հարաբերություններից
- եթե օֆերտայում սահմանված է ակցեպտի համար ժամկետ, ապա պայմանագիրը կնքված է համարվում, եթե օֆերտա ուղարկած անձն ակցեպտն ստացել է օֆերտայում նշված ժամկետի սահմաններում
- երբ գրավոր օֆերտայում ակցեպտի համար ժամկետ սահմանված չէ, պայմանագիրը կնքված է համարվում, եթե օֆերտա ուղարկած անձն ակցեպտն ստացել է մինչև օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված ժամկետի ավարտը, իսկ եթե նման ժամկետ սահմանված չէ, ապա՝ դրա համար անհրաժեշտ ժամկետում
- երբ օֆերտան արված է բանավոր՝ առանց ակցեպտի համար ժամկետ նշելու, պայմանագիրը համարվում է կնքված, եթե մյուս կողմն անհապաղ հայտարարել է դրա ակցեպտի մասին

- ❑ Այն դեպքերում, երբ ակցեպտի մասին ժամանակին ուղարկված ծանուցումն ստացվել է ուշացումով, ակցեպտն ուշացած չի համարվում, եթե օֆերտա ուղարկած կողմը մյուս կողմին անհապաղ չի տեղեկացնում ակցեպտն ուշացումով ստանալու մասին: Եթե օֆերտա ուղարկած կողմը մյուս կողմին անհապաղ տեղեկացնում է նրա՝ ուշացումով ստացած ակցեպտի ընդունման մասին, ապա պայմանագիրը համարվում է կնքված
- ❑ Պայմանագիրն օֆերտայում առաջարկվածից այլ պայմաններով կնքելու համաձայնության մասին պատասխանն ակցեպտ չէ: Նման պատասխանը համարվում է հրաժարվել ակցեպտից և միաժամանակ՝ նոր օֆերտա
- ❑ Եթե պայմանագրում նշված չէ դրա կնքելու վայրը, պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած քաղաքացու բնակության կամ իրավաբանական անձի գտնվելու վայրում
- ❑ Եթե կողմը, ում համար օրենքին համապատասխան պարտադիր է պայմանագիր կնքելը, խուսափում է այն կնքելուց, մյուս կողմն իրավունք ունի դատարան դիմել՝ պայմանագիրը կնքելուն հարկադրելու պահանջով:
- ❑ Պայմանագիր կնքելուց անհիմն խուսափող կողմը պետք է մյուս կողմին հատուցի դրանով պատճառված վնասները

Պայմանագիրը կարող է կնքվել նաև աճուրդ անցկացնելու միջոցով

Սկզբունքորեն աճուրդի միջոցով կարող է կնքվել
ցանկացած պայմանագիր, եթե այդ եղանակով
պայմանագրի կնքումը չի հակասում տվյալ տեսակի
պայմանագրի էությանը:



*Որպես աճուրդի կազմակերպիչ
կարող է հանդես գալ գույքի
սեփականատերը, իրավունքների
տիրապետողը, աշխատանքներ կամ
ծառայություններ առաջարկողը,
ինչպես նաև այն անձը, որը գործում է
սեփականատիրոջ կամ իրավատիրոջ
հետ կնքված պայմանագրի հիման
վրա և հանդես է գալիս նրա կամ իր
անունից/հ.463/:*



Աճուրդն իրականացվում է սակարկությունների կամ
մրցույթի ձևով:



Սակարկություններում հաղթած է համարվում առավել բարձր գին առաջարկած անձը:

Մրցություն հաղթում է այն անձը, որը անուրդի կազմակերպիչների կողմից նախապես նշանակված մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է լավագույն պայմանները:

ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /մրցույթը/

բաց

փակ

Բաց սակարկությանը (մրցույթին) կարող է մասնակցել ցանկացած անձ:

Փակ սակարկությանը (մրցույթին) մասնակցում են միայն այդ նպատակով հրավիրված անձինք:



Start Date

End Date



Start Date: 5/15/2007

End Date: 6/15/2007

Աճուրդի մասին ծանուցումը պետք է արվի կազմակերպչի կողմից աճուրդն անցկացնելուց առնվազն 30 օր առաջ, որը պետք է տեղեկություններ պարունակի աճուրդի տեղի, ժամանակի և ձևի, դրա առարկայի ու անցկանման կարգի, այդ թվում՝ աճուրդում մասնակցության ձևակերպման, հաղթողների որոշման մասին:

➤ քաց սակարկությունների կազմակերպիչն իրավունք ունի հրաժարվել այն անցկացնելուց ոչ ուշ քան աճուրդի անցկացման օրվանից 3 օր առաջ, իսկ մրցույթն անցկացնելիս 30 օր առաջ


➤ փակ աճուրդի կազմակերպիչը պարտավոր է հատուցել իր հրավիրած մասնակիցների վնասները անկախ այն քանից, թե ծանուցումն ուղարկելուց հետո ինչ ժամկետում է հրաժարվել աճուրդից

➤ աճուրդի մասնակիցները ծանուցման մեջ նշված ժամկետներում ու կարգով մուծում են կանխավճար: Եթե աճուրդը չի կայացել կանխավճարը վերադարձվում է: Այն վերադարձվում է նաև չհաղթած մասնակիցներին



Աճուրդում հաղթած անձը և աճուրդի
կազմակերպիչը սակարկություններ կամ
մրցույթ անցկացնելու օրը ստորագրում են
աճուրդի արդյունքների մասին
արձանագրություն, որն ունի պայմանագրի ուժ:

Եթե աճուրդի առարկան պայմանագիր կնքելու
իրավունքն է, ապա կողմերը նման պայմանագիր
պետք է ստորագրեն աճուրդի ավարտից և
արձանագրության ձևակերպումից հետո 20 օրվանից
կամ ծանուցման մեջ նշված ժամկետից ոչ ուշ



ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽԵԼԸ և ԼՈՒԾԵԼԸ

Ընդհանուր կանոնի
համաձայն պայմանագրերը
հնարավոր է փոփոխել կամ
լուծել կողմերի փոխադարձ
համաձայնությամբ, եթե այլ
բան նախատեսված չէ
օրենքով կամ պայմանագրով:
/հոգուտ երրորդ անձի կնքված
պ-իր/



օրենք – պայմանագիր



Կողմերից մեկի պահանջով
պայմանագիրը կարող է
փոփոխվել կամ լուծվել միայն
դատարանի վճռով և միայն
հետևյալ երեք դեպքերում

- ❑ կողմի թույլ տված պայմանագրի էական խախտման,
- ❑ հանգամանքների էական փոփոխության,
- ❑ օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում

Էական է ճանաչվում
կողմերից մեկի թույլ տված
պայմանագրի այնպիսի
խախտումը, որը մյուս
կողմին պատճառում է
այնպիսի վնաս, որը
վերջինիս գրկում է
նրանից, ինչ իրավասու էր
ականկալել պայմանագիրը
կնքելիս:

/մատակարարում/





Հանգամանքների փոփոխությունը էական է
համարվում, եթե դրանք այնքան են փոփոխվել, որ
կողմերը այդպիսիք կանխատեսելու
հնարավորության դեպքում կկնքեին էականորեն
տարբեր պայմաններով պայմանագիր կամ
ընդհանրապես չէին կնքի:

Հանգամանքների էական փոփոխության դեպքում պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել երկու կողմերի համաձայնությամբ

Համաձայնության բացակայության դեպքում՝

Հանգամանքների էական փոփոխության հիմքով պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- ✓ Պայմանագիրը կնքելու պահին կողմերը ելել են այն բանից, որ հանգամանքների նման փոփոխություն տեղի չի ունենա
- ✓ Հանգամանքների փոփոխությունն առաջացել է այնպիսի պատճառներով, որոնք շահագրգռո կողմը չի կարող հաղթահարել դրանք ծագելուց հետո
- ✓ Պայմանագրի կատարումը առանց դրա պայմանների փոփոխության կիսախտի կողմերի պայմանագրին համապատասխանող գույքային շահերի հարաբերակցությունը
- ✓ Գործարար շրջանառության սովորույթներից կամ պայմանագրի էությունից չի բխում, որ հանգամանքների փոփոխության ռիսկը կրում է շահագրգռո կողմը:

Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել նաև օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Այդպիսի հիմքեր կարող են հանդիսանալ պայմանագրի կողմերի այն գործողությունները (անգործությունը), որոնք ստեղծում են մյուս կողմին վնաս պատճառելու հնարավորություններ:

Օրինակ, միանալու պայմանագրին միացած կողմն իրավունք ունի պահանջել լուծելու կամ փոփոխելու պայմանագիրը, եթե միանալու պայմանագիրը կողմին զրկում է նման տեսակի պայմանագրով սովորաբար տրամադրվող իրավունքներից, բացառում կամ սահմանափակում է մյուս կողմի պատասխանատվությունը կամ պարունակում է միացած կողմի համար այլ ակնհայտ ծանր պայմաններ:



Պայմանագիրը օրենքով
կամ պայմանագրով
նախատեսված դեպքերում
կարող է փոփոխվել կամ
լուծվել նաև պայմանագիրը
կատարելուց միակողմ
հրաժարվելու կամ դրա
պայմանները միակողմ
փոփոխելու դեպքում

Օրինակ, փոխառությունը մաս – մաս վերադարձնելու
պայմանը խախտելու դեպքում,
Հանձնակատար $\longleftrightarrow$ հանձնարարող

*պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու
համաձայնությունը կնքվում է նույն ձևով, ինչ ձևով որ
կնքվել է պայմանագիրը*

Պայմանագիրը փոփոխվելու դեպքում կողմերի պարտավորությունները պահպանվում են ըստ փոփոխված պայմանագրի, իսկ լուծելու դեպքում դադարում են:



Պայմանագիրը փոփոխվելու կամ լուծվելու դեպքում՝

կողմերն իրավունք չունեն պահանջելու վերադարձնել այն, ինչ կատարել են պարտավորությամբ մինչև պայմանագրի փոփոխման կամ լուծման պահը, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ:

Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տրված պայմանագրի էական խախտումը, ապա մյուս կողմը իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի խախտմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները:

Թիվ ԵՇԴ/1103/02/11 քա. Գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.11.2012թ. որոշում

Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Ընդ որում, օրենսդիրը սույն դրույթով հնարավորություն է ընձեռել կողմին պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջ ներկայացնել դատարան միայն հետևյալ դեպքերից հետո՝

- պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց, կամ
- այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, կամ
- ժամկետի բացակայության դեպքում՝ առաջարկը ստանալուց հետո երեսնօրյա ժամկետում:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ և ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Պարտավորական հարաբերություններում
պարտավորությունը որպես կանոն կատարվում են
ակտիվ գործողություններ կատարելով

Պարտավորությունը համարվում է կատարված,
երբ նրա սուբյեկտները կատարման ընթացքում
դրսևորում են անհրաժեշտ բարեխղճություն և
գործում են պարտավորությունների կատարման
համար քաղաքացիական օրենսդրությամբ
նախատեսված սկզբունքների պահանջներին
համապատասխան

Պարտավորությունների կատարման հիմնական սկզբունքներն են

Ռեալ
կատարման

Պատշաճ
կատարման

Խնայողության

Գործարար
պարկեշտության



Ռեալ կատարման սկզբունքի

համաձայն պարտավորությունը հանարվում է կատարված, երբ պարտապանը պարտավորության առարկան հանձնում է պարտատիրոջը բնեղենով



- պարտավորությունը բնեղենով կատարելու փոխարեն դրամական փոխհատուցում տալ, որպես կանոն չի թույլատրվում
- պարտավորությունը ոչ պատշաճ կատարելու դեպքում տուժանք վճարելը և վնասները հատուցելը պարտապանին չի ազատում պարտավորությունը բնեղենով կատարելուց, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով /ՀՀ քաղ.օր-ի 412 հոդ./



➤ պարտատերն իրավասու է պարտապանից բնեղենով կատարում պահանջել պարտավորության ոչ պատշաճ կատարման դեպքում /անորակ ապրանք/

➤ այդ սկզբունքը չի կիրառվում, երբ պարտապանն ընդհանրապես չի կատարում պարտավորությունը

➤ ռեալ կատարման սկզբունքի նման սահմանափակումը հանարավորություն է տալիս ընտրել գործընկեր

➤ անհատապես որոշվող իրը հանձնելու պարտավորությունը չկատարվելու դեպքում պարտատիրոջը իրավունք է վերապահվում պահանջել, որ գույքը վերցվի և հանձնվի իրեն /ՀՀ քաղ. օր-ի 414-հոդ./

➤ տուժանք - հրաժարագին,

➤ պարտատերը կորցնում է հետաքրքրությունը



Գործարարության պարկեշտության սկզբունքը



➤ ընդհանուր նորմ նվիրված չէ
➤ այդ սկզբունքի պահանջներն իրենց
➤ ամրապնդումն են գտել տարբեր նորմերում /մրցակցության
սահմանափակման նպատակներով իրավունքներն
օգտագործելու արգելքը և շուկայում գերիշխող դրությունը
չարաշահելը ՀՀ քաղ. օր-ի 12 հոդ./


➤ Պարտավորության մասնակիցներից պահանջում է
պարտավորության կատարման ընթացքում միմյանց ցույց
տալ անհրաժեշտ օգնություն, չխոչնդոտել պարտ-ների
կատարմանը /երկիր անհայտ նոր տեխնոլոգիաներ
ներկրող սուբյեկտը պարտավոր է...

➤ Չնպաստել չկատարման հետևանքով առաջացած
վնասների ավելացմանը /ՀՀ քաղ.օր-ի 420 հոդ./



Այդ սկզբունքը առավել լայն կիրառություն ունի վատահույության վրա հիմնված /հանձնարարություն, պահատվություն, համատեղ գործունեություն և այլն/ պարտավորություններում

Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պարտավորություններում



ՀՀ քաղ. օր-ի 743 հոդ. համաձայն, եթե առանց կատարվելիք աշխատանքների որակի վատթարացման պատվիրատուի տրամադրած նյութերն ու սարքավորումներն օգտագործել հնարավոր չէ, իսկ պատվիրատուն էլ մերժում է դրանց փոխարինումը, ապա կապալառուն իրավունք ուի հրաժարվել պայմանագրից ու պահանջել վճարել կատարած աշխատանքների համար



Կապալառուն պատվիրատուին պետք է տեղեկացնի խոչընդոտների մասին

Խնայողության սկզբունքը

*պարտավորության
մասնակցից պահանջում է*

- *պարտավորությունը
կատապել մյուս մասնակցի
համար առավել
խնայողությամբ,*
- *պարտավորության
կատարման մի քանի ձևերից
ընտրել այն ձևը, որով
առավելագույնս կապահովվի
մյուս մացնակցի շահերի
պաշտպանությունը,*
- *նրա կողմից կատարվելիք
ծախսերի կրճատումը*



ՀՀ քաղ. օր-ը այդ սկզբունքն ամրագրող ընդհանուր նորմ չի պարունակում

Այդ սկզբունքը իր ամրապնդումը գտել է պարտավորական հարաբերությունները կարգավորող առանձին իրավական նորմերում

Օրինակ 708 հոդ. կապալառուին իրավունք է վերապահում աշխատանքի որակի վրա չազդող խնայողություններ կատարել...

711 հոդ. կապալառուին պարտավորեցնում է կապալառուին նյութերն օգտագործել խնայողաբար...

420 հոդ. երկու կողմերի մեղքով պարտավ-նը չկատարվելու դեպքում դատարանին իրավունք է տալիս...

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պարտավորությունները պետք է կատարվեն պարտավորության պայմաններին, օրենքին, այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պահանջների և պայմանների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան

լրիվ ծավալով և անթերի կատարել
պարտավորության բովանդակությունից և
օրենսդրությունից բխող բոլոր
պարտականությունները

Պատշաճ կատարման սկզբունքը պահանջում է, որ պարտավորությունները կատարեն պատշաճ սուբյեկտները, պատշաճ ձևով, պայմանավորված վայրում, պատշաճ առարկան հանձնելով և այլն



- այդ սկզբունքի հիմնական պահանջները և պայմանները նախատեսված են ՀՀ Քաղ.օր-ի “Պարտավորությունների կատարումը” գլխում
- պարտավորությունների կատարման օրենքով նախատեսված պահանջներից և պայմաններից մեկը չկատարելու կամ խախտելու դեպքում պարտավորությունը համարվում է ոչ պատշաճ կատարված

կատարումը համապատասխան սուբյեկտների միջև

ՊԱՐՏԱՏԵՐ

կատարում կարող է պահանջվել անմիջա-
կանորեն պարտապա-
նից, եթե պարտավո-
րության կատարման
պարտականությունը
/ամբողջությամբ կամ
մի մասով/ չի դրվել
երրորդ անձի վրա



ՊԱՐՏԱՊԱՆ

կարող է պարտավորու-
թյան կատարումը դնել
երրորդ անձի վրա, եթե
օրենքից, այլ իրավական
ակտերից, պարտավորու-
թյան պայմաններից կամ
դրա էությունից չի բխում
պարտավորու-
թյունը
անձամբ կատարելու
պարտապանի
պարտականությունը
/հանձնարարության պ-իր/

➤ Պարտատերը պարտավոր է ընդունել երրորդ անձի կողմից առաջարկվող կատարումը /հոդ. 351/

➤ Պարտավորության կատարումը երրորդ անձի վրա դնելու համար պարտապանը պատասխիրոջ համաձայնության կարիք չունի քանի որ

Պարտապանը պարտավորությունից դուրս չի գալիս

Երրորդ անձը սույլ պարտապանի հանձնարարության կատարողն է

Երբեմն երրորդ անձը իր նախաձեռնությամբ կարող է կատարել պարտավորությունը պարտապանի փոխարեն և դառնալ պարտատեր /գրավառու, վարձակալ/



Պարտապանը պատասխանատու է երրորդ անձի կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե օրենքով սահմանված չէ, որ պատասխանատվությունը կրում է պարտավորությունը անմիջականորեն կատարող երրորդ անձը / ՀՀ քաղ. օր-ի 419 հոդ. /

Պարտապանից կատարումը կարող է ընդունել ինչպես պարտատերը, այնպես էլ նրա կողմից լիազորված անձը

Կատարումն ընդունող լիազորված անձն ինքնուրույն իրավունքներ ձեռք չի բերում: Նա սուկ կատարումն ընդունող է:



Պարտավորության կատարումն ընդունելու համար
լիազորված անձի գործողությունների համար
պատասխանատու է պարտատերը, եթե օրենքով
նախատեսված չէ, որ պատասխանատվություն է
կրում պարտավորության կատարման ընդունողը



Լիազորված անձի հանդեպ
պարտավորությունը կատարելու՝
պարտատիրոջ պահանջը
պարտապանի համար պարտադիր
է, անկախ նրանից նման՝ պայման
պայմանագրում նախատեսված է,
թե ոչ:

Պարտապանն իրավունք ունի չկատարելու պարտատիրոջ
այն պահանջը, որը հակասում է օրենքին կամ
պայմանագրին, կամ այդպիսի պահանջը կատարելու
համարստիպ ված է կատարելու պայմանագրով
չնախատեսված լրացուցիչ ծախսեր պահանջող

Անկախ նրանից, թե ում հանդեպ է պարտապանը
կատարել պարտավորությունը, նա իրավունք ունի
ապացույցներ պահանջել առ այն, որ կատարումն
ընդունում է հենց պարտատերը կամ դրա համար
նրա լիազորած անձը:


Եթե պարտապանը նման ապացույցներ չի
պահանջել, ապա կրում է նման պահանջ
չներկայացնելու հետևանքների ռիսկը,

եթե այլ բան նախատեսված չէ կողմերի
համաձայնությամբ ու չի բխում գործարար
շրջանառության սովորույթներից կամ
պարտավորության էությունից

(ՀՀ քաղ. օր-ի 350 հոդ.):

Կատարման առարկան և նրա որակը

Կատարման առարկա են հանդիսանում այն բարիքները, որոնց կապակցությամբ պարտավորության մասնակիցները պարտավոր են որոշակի գործողություն կատարել՝ դրամ վճարել, գույք հանձնել, աշխատանք կատարել...



Պարտավորությունը կհամարվի պատշաճ
կատարված, եթե պարտապանը պարտատիրոջը
հանձնի հենց այն իրը, կատարի այն
աշխատանքը, մատուցի այն ծառայությունը, որի
մասին համաձայնություն են կայացրել

անհատապես որոշվող
իր



տեսականիշերով
որոշվող իր



CERTIFICATE

The Germanischer Lloyd Certification GmbH, 20459 Hamburg,
hereby certifies that the company

Hapag-Lloyd Aktiengesellschaft
Ballindamm 25, D-20095 Hamburg

has established and maintains an Integrated Quality and Environmental Management System relevant for
Container Liner Shipping Activities
in the Regions North Europe, South Europe, Asia, North America, Latin America,
and
Fleet and Container Management,
Information Technology and Business Administration.

Germanischer Lloyd Certification GmbH has audited the company. Evidence was provided that the
Integrated Management System fulfils the requirements of the following standards:

ISO 9001:2000 and ISO 14001:2004

The validity of this certificate is subject to the company applying and maintaining its
Integrated Management System in accordance with the standard indicated.
This will be monitored by Germanischer Lloyd Certification GmbH.

The certificate is valid until June 21, 2009

Hamburg, June 21, 2007

Certificate No. QS-142 HH and EM-2880 HH

Germanischer Lloyd
TGA ZM 07-91-00

Germanischer Lloyd
TGA ZM 07-91-00

(Bernhard Ständer)
(Fred Wohlers)

This certificate is valid only in connection with Annexes 1, 2, 3, 4, 5 and 6 dated 2007-05-21

Germanischer Lloyd

Պարտավորությունը կհամարվի
պատշաճ կատարված, եթե
պահպանված է հանձնված
ապրանքի, կատարված
աշխատանքի մատուցված ծառայու-
թյան որակը

առարկայի որակին ներկայացվող
պահանջներն ամրագրվում են

- ստանդարտներում,
- տեխնիկական պայմաններում,
- բաղադրագրություններում/ռեցեպտուրա/
- նմուշներում - էտալոններում
- պայմանագրում



Եթե ամրագրված չէ, այս փաստաթղթերում՝ պետք է
համապատասխանի սովորաբար ներկայացվող պահանջներին

Դրամական պարտավորությունների կատարումը



- ✓ դրամը պատկանում է տեսականիշերով որոշվող իրերի թվին
- ✓ վերադարձման ենթակա է ոչ թե նույն դրամանիշերը, այլ դրամի նույն քանակը

ՀՀ-ում դրամական պարտավորությունները պետք է արտահայտվեն դրամով

Արտարժույթ

պարտքի արժույթ

վճարման արժույթ





Դրամական պարտավորություններով թույլատրվում է %-րի գանձում, սակայն %-րի չափը չի կարող գերազանցել ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային %-ի հաշվարկային դրույքի կրկնապատիկը /հ.879/

Դրամական պարտավորությունը համարվում է պատշաճ կատարված, եթե պարտապանը պարտատիրոջն է հանձնում դրամի համապատասխան քանակը և պայմանավորված %-րի գումարը:

Երկարաժամկետ պարտավորություններում կարող է նախատեսվել վճարների ինդեքսավորում՝ կողմերի վերապահած պայմաններով (Քաղ. օր. 356 հոդվ. 3-րդ կետ) օր. ռենտա

Վճարված գումարի անբավարարության դեպքում, եթե այլ համաձայնություն չի կայացվել, առաջին հերթին մարվում են պարտավորության կատարման ստացմանն ուղղված պարտատիրոջ ծախսերը, այնուհետև՝ տոկոսները իսկ մնացած մասով՝ պարտքի հիմնական գումարը /հ. 358/



Պարտապանն իրավունք ունի իրենից գանձվելիք դրամը մուծել նոտարի դեպոզիտ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում դատարանի դեպոզիտ, եթե պարտավորությունը չի կարողանում կատարել հետևյալ պատճառներով

- պարտատերը կամ կատարումն ընդունելու համար նրա կողմից լիազորված անձը բացակայում են կատարման վայրից
- պարտատերն անգործունակ է և ներկայացուցիչ չունի
- ակնհայտորեն պարզ չէ, թե ով է պարտավորությամբ պարտատերը
- պարտատերը խուսափում է կատարումն ընդունելուց և թույլ է տվել կետանցում

Նոտարը կամ դատարանը պարտատիրոջը տեղեկացնում են դեպոզիտ մուծված դրամի կամ արժեթղթերի մասին: Պարտատերն իրավունք ունի դրանք ստանալ հայցային վաղեմության ժամկետի ընթացքում:

Դրամը կամ արժեթղթերը նոտարիատի կամ դատարանի դեպոզիտ մուծելը համարվում է պարտավորության կատարում:

Պարտապանի իրավունքն է և ոչ թե պարտականություն
Նոտարը իրավասու չէ ստուգելու, թե ինչու է դեպոզիտ դրամ մուծվում

Եթե հետագայում պարզվի, որ պարտապանն իրավասու չէր դեպոզիտ հաշվին դրամ մուծելով, պարտավորության կատարումը կհամարվի ոչ պատշաճ կատարված

Պարտապանը պարտավորությունը պետք է կատարի այնպես, ինչպես նախատեսված է օրենքով կամ պայմանագրով:

Երկնտրելի պարտավորությունների կատարումը
պարտավորության կատարման առարկան որոշում է
այն կողմը, որը պարտավորությամբ նախատեսված
երկու կամ ավելի առարկաներից մեկը ընտրելու
իրավունք ունի



Քաղ. օր. 359 հոդ. պարտապանը
ընտրության իրավունք ունի, եթե
այլ բան չի բխում օրենքից կամ
պարտավորության
պայմաններից դիսպոզիտիվ –
նաև պարտատերը ընտրության



Ընտրությունը միակողմանի գործարք է: Այն
ուղղված է պարտավորության առարկայի
կոնկրետացմանը և մյուս կողմի հավանության
անհրաժեշտություն չունի

Երկրնտրելի պարտավորությունների կատարման
առանձնահատկությունը դրսևորվում է, երբ
առարկաներից մեկը ոչնչանում է

Եթե ընտրության
իրավունքը պատկանում է
պարտապանին՝ հանձնում
է պահպանված առարկան

Եթե ընտրության իրավունքը
պատկանում է պարտատիրոջը և
նա չի ընտրում՝ պարտավ-ը
դադարում է

Ֆակուլտատիվ

պարտապանը
պարտավոր է
կատարել որոշակի
գործողություն, բայց
կա նաև փոխարինող

հիմնական

փոխարինող

Հիմնական առարկայի պատահական ոչնչացումը
պարտավորությունը չի դադարեցնում



Ժամանակին կատարումը

Պարտավորության կատարման ժամկետը կարող է նախատեսվել օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով

կարող են նախատեսվել՝ օրացուցային ամսաթվով, որոշակի ժամանակամիջոցով կամ այնպիսի իրադրության մատնանշմամբ, որը անպայմանորեն պետք է տեղի ունենա

անհրաժեշտ է տարբերել

ընդհանուր և
մասնակի

հիմնական և հատուկ

սկիզբը և վերջը նախատեսող

Եթե պարտավորությունը նախատեսում կամ հնարավորություն է ընձեռում որոշել կատարման օրը կամ ժամանահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ ժամանակահատվածի ցանկացած պահին

Երբ կատարման ժամկետ չի նախատեսվում և որոշման պայմաններ չկան, պարտավորությունը պետք է կատարվի ծագելուց հետո խելամիտ ժամկետում /հ. 352/

խելամիտ ժամկետ /փոխադրում/


Խելամիտ ժամկետում չկատարված, ինչպես նաև կատարման ժամկետը պահանջի պահով որոշված պարտավորությունը պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո յոթնօրյա ժամկետում, երե կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից..



ՅՈԹՆՕՐՅԱ արտոնյալ ժամկետ տրվում է այն պարտավորություններով, որոնց կատարման համար անհրաժեշտ է նախապատրաստվել:
Օրինակ, փոխառություն, պահասենյակ, ավանդ:

Ժամկետից շուտ կատարելը

Պարտավորությունը ժամկետից շուտ կատարելը պարտապանի իրավունքն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով, պարտավորության պայմաններով կամ չի բխում պարտավորության էությունից



գործարարների հարաբերություններում

ադաժամկետ կատարման համար անհրաժեշտ է պարտատիրոջ համաձայնությունը / հոդ. 353/

Եթե պարտապանը սահմանված ժամկետում պարտավորությունը չի կատարում, համարվում է կետանցող եթե ի վիճակի է եղել կատարելու, բայց իր մեղքով չի կատարել

Պարտապանը կետանցող չի համարվի

- եթե ուշացրել է այպիսի հանգամանքներում, որպիսիք ինքը կանխատեսել և կանխել չէր կարող
- եթե պարտատերը չնդունի կատարումը, ստացական չտա

Կետանցում թույլ տված պարտապանը պարտատիրոջ առաջ պատասխանատու է կետանցումով պատճառած վնասների համար և կետանցումից հետո կատարման պատահաբար առաջացած անհնարինության համար /հոդ. 421/ Օրինակ անհատապես որոշվող իրը ապրիլի 25-ին չհանձնելու...




Քաղ. օր. 421 հոդ. պարտատիրոջն իրավունք է տալիս պարտապանի կողմից կետանցում թույլ տալուց հետո հրաժարվել կատարումն ընդունելուց և պահանջել վնասների հատուցում, եթե կետանցման հետևանքով կատարումը պարտատիրոջ համար կորցրել է հետաքրքրությունը /սեզոնային հագուստ/

Պարտատիրոջ կետանցումը /ՀՀ քաղ.օր-ի 422 հոդ./

- հրաժարվել է պարտապանի կողմից առաջարկված պատշաճ կատարումն ընդունելուց
- չի կատարել այն գործողությունները, որոնց չկատարելու դեպքում պարտապանը չէր կարող կատարել պարտավորությունը
- ընդունելով կատարումը հրաժարվում է ստացական տալուց, պարտքային փաստաթուղթը վերադարձնելուց կամ այն վերադարձնելու անհնարինության մասին ստացականում նշում կատարելուց /հոդ. 424/



Պարտատիրոջ կողմից կետանցում թույլ տրվելու դեպքում պարտապանը կարող է պահանջել կետանցման հետևանքով պատճառված վնասները



Պարտատերը պարտավոր է այդ վնասները հատուցել, եթե չապացուցի, որ ուշացումը անձամբ իր կամ այն անձի մեղքով տեղի չի ունեցել, որոնց վրա դրված է եղել պարտավորության կատարման ընդունումը: /Օրինակ պարտապանը ապրանքները հասցրել է պարտատիրոջը, բայց դրանք չեն ընդունվել/

Եթե կողմերը կազմակերպություններ են, ապա պարտատերը կետանցելու դեպքում պարտավոր է վճարել նաև օրենքով կամ պայմանագրով նախատեսված տուժանքը

Դրամական պարտավորության ընդունումը պարտատիրոջ կետանցելու դեպքում, պարտապանն իրավունք ունի այդ ժամանակամիջոցի համար %- ներ չվճարել /հ. 422/

Պարտավորության կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը

Օրենքով, այլ իրավական ակտերով կամ պարտավորության
պայմաններով կարող է նախատեսվել պարտապանի
պարտականությունը՝ պարտատիրոջը կամ նրա նշած
անձին տեղեկացնել պարտավորության կատարման
ընթացքի մասին

Կատարման վայրը

Պարտավորությունը պետք է
կատարվի այն վայրում, որը որոշված է
օրենքով, այլ իրավական ակտերով
կամ պայմանագրով կամ բխում է
գործարար շրջանառության
սովորույթներից կամ
պարտավորության էությունից



*Եթե կատարման վայրը որոշված չէ, այն պետք է
կատարվի՝*

- 1) հողամաս, շենք, շինություն կամ այլ անշարժ գույք հանձնելու պարտավորությամբ՝ գույքի գտնվելու վայրում.
- 2) ապրանք կամ այլ գույք հանձնելու պարտավորությամբ, որը նախատեսում է դրա փոխադրումը՝ գույքը առաջին փոխադրողին հանձնելու վայրում.
- 3) ձեռնարկատիրոջ՝ ապրանք կամ այլ գույք հանձնելու պարտավորությամբ՝ գույք պատրաստելու կամ պահպանելու վայրում, եթե այդ վայրը պարտավորության ծագման պահին հայտնի է եղել պարտատիրոջը.
- 4) դրամական պարտավորությամբ՝ պարտավորության ծագման պահին պարտատիրոջ բնակության վայրում, իսկ եթե պարտատերն իրավաբանական անձ է, ապա՝ պարտավորության ծագման պահին նրա գտնվելու վայրում:
- 5) այլ պարտավորությունների համար՝ պարտապանի բնակության վայրում, իսկ եթե պարտապանն իրավաբանական անձ է, ապա նրա գտնվելու վայրում:

Պարտավորության կատարման եղանակը

ամբողջությամբ

մաս - մաս

անմիջապես
պարտատիրոջը կամ նրա
ներկայացուցչին

առաքման համար
տրանսպորտային
կազմակերպությանը կամ
փոստին

պարտապանի կողմից
անձամբ

երրորդ անձի կողմից

կատարման եղանակը կողմերը որոշում են
պարտավորությունների ձևավորման սկզբնական փուլում



Եթե պարտավորության կատարման եղանակը
կողմերը չեն որոշել, ենթադրվում է, որ այն
պետք է կատարվի առարկան ամբողջությամբ
հանձնելու եղանակով

Պարտատերն իրավունք ունի չնդունել մաս-
մաս կատարումը, եթե այլ բան նախատեսված
չէ օրենքով, այլ իրավական ակտերով,
պարտավորության պայմաններով և չի բխում
գործարար շրջանառու թյան սովորույթներից
կամ պարտավորության էությունից /հոդ. 349/
/1 տոննա ցորեն/

Գործարարների հարաբերություններում մեծամասամբ
մաս-մաս /մատակարարում՝ խմբականակներով/

Կողմերին պարտավորության կատարումից միակողմ
հրաժարվել ու դրա պայմանները միակողմ փոփոխել չի
թույլատրվում, բացառությամբ օրենքով նախատեսված
դեպքերի

Գործարարների հարաբերություններում
պարտավորությունից միակողմ հրաժարումը կամ դրա
միակողմ փոփոխումը թույլատրվում է պայմանագրով
նախատեսված դեպքերում, եթե այլ բան չի բխում օրենքից
կամ պարտավորության էությունից (ՀՀ քաղ. օր-ի 348 հոդ.):

Երկկողմ պարտավորություններում

Երկու կողմերն էլ և պարտատեր են և պարտապան /առուծախ/



Այդպիսի պարտավորությունը կողմերը պարտավորությունը պետք է կատարեն միաժամանակ, երե օրենքով կամ պայմանագրով այլ բան չի նախատեսված



*Սովորաբար կողմերից մեկը կատարում է առաջինը: Դա բխում է կամ օրենքից, կամ հաշվարկների ձևից, կամ գործարար շրջանառության սովորույթներից
Նախապես վճարելու դեպքերում, ակրեդիտիվ/*

Այս կարգից էապես տարբերվում է պարտավորությունների հանդիպական կատարումը

Հանդիպական է ճանաչվում այն կատարումը, երբ կողմերից մեկի պարտավորության կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարումը

ՀՀ քաղ. օր-ի 367 հոդ. համաձայն հանդիպական կատարում իրականացնելու պարտականություն ունեցող կողմը պարտապանի կողմից պայմանագրով համաձայնեցրած կատարումը չառաջարկելու կամ այդպիսի կատարումը պայմանավորված ժամկետում տեղի չունենալու մասին ակնհայտորեն վկայող հանգամանքների առկայության դեպքում իրավասու է կասեցնել իր պարտավորության կատարումը կամ հրաժարվել այն կատարելուց և պահանջել հատուցելու վնասները



Այն դեպքերում, երբ կողմը իր պարտավորությունը չի կատարել, իսկ հանդիպական պարտավորությունը կատարվել է, մյուս կողմը պարտավոր է կատարել իր պարտավորությունը



ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՀՀ քաղ. օրենսդրությամբ պարտավորությունների
պատշաճ կատարումն ապահովվում է

ընդհանուր միջոցներ



✓ կատարմանը
հարկադրելը
✓ պատճառված
վնասները հատուցելը

հատուկ միջոցներ



կիրառվում են
իրավաբանական անձանց,
նրանց և քաղաքացիների,
քաղաքացիների
հարաբերություններում



❑ Պարտավորության կատարման ապահովման միջոցները ընդհանուր նշանակություն չունեն, կիրառվում են օիենքով նախատեսված լինելու կամ կողմերի հատուկ պայմանավորվածության դեպքում

❑ Պարտավորության կատարման ապահովման միջոցներից ցանկացածի կիրառման համար անհրաժեշտ է, որ գոյություն ունենա ապահովման կարիք զգացող որևէ պարտավորություն

ԳԼԽԱՎՈՐ և ՀԻՄՆԱԿԱՆ

ԼՐԱՑՈՒՑԻՉ

Եթե կողմերն ապահովման միջոցի վերաբերյալ պայմանագիր կնքեն այն դեպքում, երբ գոյություն չունի գլխավոր պարտավորությունը, ապա ապահովման միջոցի վերաբերյալ պայմանագիրը կհամարվի անվավեր

Պարտավորությունների կատարման ապահովման միջոցների լրացուցիչ բնույթն արտահայտվում է

➤ գլխավոր պարտավորության դադարումը դադարեցնում է նաև լրացուցիչ պարտավորությունը (բացառությամբ երաշխիքի)

➤ եթե լրանում է գլխավոր պարտավորության հայցային վաղեմության ժամկետը, ապա լրացած է համարվում նաև լրացուցիչ պարտավորության հայցային վաղեմության ժամկետը

➤ գլխավոր պարտավորության անվավերությունը անխուսափելիորեն առաջացնում է ապահովման միջոցի վերաբերյալ կայացված համաձայնության անվավերություն (բացառությամբ երաշխիքի)

➤ ապահովման միջոցի վերաբերյալ համաձայնության դադարումը կամ անվավերությունը գլխավոր պարտավորության վրա որևէ ազդեցություն չի ունենում

Պարտավորությունների կատարման
ապահովման հիմնական միջոցներն են

ՏՈՒԺԱՆՔ
369-372 հոդ.

ԵՐԱՇԽԻՔ
383-394 հոդ.

ՊԱՀՈՒՄ
373-374 հոդ.

ԿԱՆԽԱՎՃԱՐ
395-396 հոդ.

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
375-382 հոդ.

ԳՐԱՎ
226-272 հոդ.

ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔ
225.1-225.2 հոդ.

Օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ միջոցներ

Պարտավորությունների կատարման
սպասիովման միջոցներ են կոչվում օրենքի կամ
կողմերի հատուկ համաձայնության ուժով
կիրառվող ընդհանուր նշանակություն
չունեցող և լրացուցիչ պարտավորություն
առաջացնող գույքային բնույթի այն միջոցները,
որոնց կիրառության սպառնալիքը
պարտապանին խթանում է բարեխղճորեն
կատարել իր պարտականությունը, իսկ
կիրառությունը պարտատիրոջը
հնարավորություն է տալիս բավարարել իր
պահանջը կամ ստանալ որոշակի
փոխհատուցում

ՏՈՒԺԱՆՔ

Տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

- ❖ Ունի լայն կիրառություն (ապառիկ)
- ❖ Քաղաքացիների հարաբերություններում տարածված չէ
- ❖ Կարող է հանդիսանալ միայն դրամական գումարը
- ❖ Ապահովողական ուժը՝ վճարումը պարտապանին չի ազատում պարտավորությունը բնեղենով կատարելուց
- ❖ պետք չէ ապացուցել կրած վնասների չափը



Տուժանքի տեսակները

օրենսդրական

պայմանագրային

Տուժանքի (տուգանքի, տույժի) վերաբերյալ համաձայնությունը պետք է կնքվի գրավոր՝ անկախ հիմնական պարտավորության ձևից: Գրավոր ձևը չպահպանելը անվավեր է դարձնում (պայմանագրային) տուժանքի վերաբերյալ համաձայնությունը:

Տուժանքի վճարումը պարտապանին չի ազատում պարտավորությունը բնեղենով կատարելու պարտականությունից

*Քաղ. օր-ը տուժանք հասկացության հետ միասին օգտագործում է նաև տուգանք և տույժ հասկացությունները
Դրանք տուժանքի տեսակ են*



Տուժանք (որպես կոնկրետ ապահովման միջոց) է համարվում պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանից միանվագ գանձվող այն դրամական գումարը, որի չափը որոշվում է տոկոսներով:
/ անորակ արտադրանքի (ապրանքի) մատակարարման համար /

Տուգանք նախատեսվում է կոնկրետ պարտականությունների չկատարման համար և սահմանվում է կայուն դրամական գումարով: /վագոն չտրամադրելու կամ առաքման համար բեռ չտրամադրելու դեպքում/

Տույժ է համարում այն դրամական գումարը, որը գանձվում է անբարեխիղճ պարտապանից որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտավորության կատարումը ուշացնելու յուրաքանչյուր օրվա համար:

/ մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի վճարումն ուշացնելու յուրաքանչյուր օրվա համար/

Տուժանքի տեսակները

Հաշվարկային է համարվում այն տուժանքը, երբ գանձվել կարող են տուժանքը և վնասների այն մասը, որը չի ծածկվել տուժանքով (տուգանքով, տույժով):

Տուգանքային տուժանքը պարտատիրոջը իրավունք է տալիս գանձելու ինչպես սահմանված տուժանքը, այնպես էլ վնասները լրիվ ծավալով:

Բացառիկ տուժանքը իրավունք է վերապահում բռնագանձելու միայն տուժանքը (վնասները չեն հատուցվում) և բացառում է վնասների հատուցման պահանջը:

Երկրնորելի է համարվում այն տուժանքը, երբ պարտատիրոջը իրավունք է վերապահվում իր հայեցողությամբ պարտապանից պահանջել կա մ տուժանք, կա մ վնասների հատուցում: /տարածված չէ/

Դատարանն իրավունք ունի պակասեցնելու
տուժանքի չափը, եթե այն ակնհայտորեն
անհամաչափ է պարտավորության խախտման
հետևանքներին:

Դատարանն իրավունք չունի պարտապանին
ազատելու տուժանքը վճարելու
պարտականությունից:




**Թիվ 3-27(ՏԴ) քաղ.գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008թ.
որոշում**

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ տուժանքը պարտավորությունների կատարումն ապահովող երաշխիք է: Այն նպատակաուղղված է ապահովելու պարտապանի կողմից պարտավորության կատարումը, իսկ դրա չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում նրա համար նախատեսել գույքային անբարենպաստ հետևանքներ՝ դրամական պատասխանատվություն, իսկ դատարանը կոչված է ապահովելու սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Տուժանքը պակասեցնելու դատարանի իրավունքը կոչված է կանխելու անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը:

**Թիվ ԵԿԴ/0930/02/13 քաղ.գործով ՀՀ վճռաբեկ դատարանի
18.07.2014թ. որոշում**

ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ թեև տուժանքի չափը նվազեցնելը դատարանի իրավունքն է, այդուհանդերձ իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն, ըստ էության, նաև դատարանի պարտականությունն է, քանի որ բոլոր դեպքերում խոսքը գնում է սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովման մասին:



Յուրաքանչյուր դեպքում տուժանքը պակասեցնելիս դատարանն պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե պայմանագրով նախատեսված տուժանքը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքների: Միաժամանակ տուժանքի չափի նվազեցումը չի կարող նշանակել տուժանքի վճարումից ընդհանրապես ազատում: Հակառակ դեպքում տուժանքի ինստիտուտը կիմաստագրվի և, հանդիսանալով պարտավորությունների կատարման երաշխիք, չի ծառայի իր նպատակին

Թիվ ԵՄԴ/0492/02/14 քաղ. Գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015թ. որոշում

Դատարանն իրավունք ունի, այն էլ այն դեպքում, երբ տուժանքն ակնհայտ անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքների, պակասեցնելու միայն հաշվարկված տուժանքի գումարի չափը, այլ ոչ թե փոփոխության ենթարկի պայմանագրով սահմանված տուժանքի տոկոսադրույքը: Մասնավորապես, դատարանը, նվազեցնելով կողմերի միջև կնքված համաձայնագրերով նախատեսված տուժանքի տոկոսադրույքի չափը և այն օրական 0,5 տոկոսից դարձնելով օրական 0,2 տոկոս, իսկ Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Դատարանի եզրահանգմանը, խախտել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը, արդյունքում նաև՝ պայմանագրի ազատության և մասնավոր գործերին կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքները:

ԳՐԱՎ

Պարտավորությունների կատարման ապահովման միջոցների մեջ գրավը զբաղեցնում է առանձնահատուկ տեղ և հանդիսանում է պարտավորական բնույթի իրային-իրավական ապահովման միջոց:

Գրավի պարտավորական բնույթը արտահայտվում է՝

- գրավի առարկա կարող են լինել ոչ միայն իրերը, այլև գույքային իրավունքները (պահանջները)
որոնք որպես ինքնուրույն օբյեկտ ոչ մի պարագայում իրային իրավունքի առարկա հանդիսանալ չեն կարող,
- գրավի առարկայի ոչնչացման կամ վնասման դեպքում գրավատուն պարտավոր է գրավի առարկան վերականգնել կամ փոխարինել այլ հավասարարժեք գույքով, որը հնարավոր է միայն պարտավորական հարաբերություններում, իսկ սեփականության կամ այլ իրային հարաբերություններում հնարավոր չէ

- գրավառուն իրավունք ունի գրավի պայմանագրից բխող իր իրավունքները փոխանցել այլ անձի՝ պահպանելով պահանջը զիջելու կանոնները, որը գուտ պարտավորաիրավական ինստիտուտ է
- գրավառուի պահանջները կարող են բավարարվել գրավի առարկայի վաճառքից ստացված գումարով, գրավ դրված գույքի նկատմամբ գրավառուի սեփականության իրավունք ձեռք բերելու հնարավորություն չի նախատեսում:

Հետևաբար

Ի տարբերություն սեփականատիրոջից կամ այլ իրային իրավունքի սուբյեկտներից, գրավառուն գրավի առարկայի նկատմամբ երկարատև, համաչափ, անմիջականորեն և սեփական հայեցողությամբ ներգործելու իրավասությունից չի օգտվում

ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի թիվ
ԵԿԴ/0384/02/13 որոշում

Վճռաբեկ դատարանը ընդգծել է, որ գրավի իրավունքը, ըստ էության, այլ անձի գույքի նկատմամբ ունեցած այնպիսի իրավունք է, որի շնորհիվ գրավատուն հնարավորություն ունի պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու դեպքում գրավադրված գույքի արժեքից բավարարելու իր պահանջները: Այսինքն՝ ի վերջո գրավի նպատակը գրավատուի՝ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու դեպքում գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալն է, հետևաբար գրավատուի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը, ըստ էության, նշանակում է գրավի առարկայի բռնագանձման ավարտ:



Գրավի իրայնությունը գոյություն ունի միայն այնքանով, որքանով այն ի վիճակի է ապահովել հիմնական պարտավորությունը: Գրավը հանդիսանում է երկակի բնույթը կրող պարտավորության ապահովման միջոց:

Գրավ է համարվում հիմնական պարտավորության կատարումն ապահովող այն լրացուցիչ պարտավորությունը, որը գրավատուին իրավունք է վերապահում հիմնական պարտավորության չկատարման դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով բավարարում ստանալ գրավի առարկայից:



Գրավով ապահովված պարտավորության պարտատերը մյուս պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունք ունի

Գրավը բոլոր դեպքերում իրավունք է տալիս ստանալ որոշակի դրամական գումար /տոկոսներ, վնասներ, ծախսեր.../



Նախապատվության իրավունքը գործում է նաև, երբ առարկան գրավադրված է մի քանի պահանջներ ապահովելու համար /առավել վաղ գրանցած գրավառուն.../

Գրավի առարկա կարող է լինել ցանկացած
գույք, այդ թվում՝ գույքային
իրավունք /պահանջ/
բացառությամբ, շրջ. հանված,
անձի հետ անխզ. կապված...



ընդհանուր համատեղ սեփա-
կանություն հանդիսացող գույքը կարող է
գրավ դրվել միային բոլոր
համասեփականատերերի գրավոր
համաձայնությամբ

*Ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը
կարող է իր բաժինը գրավ դնել առանց մյուս
սեփականատերերի համաձայնության, սակայն այն
օտարելիս կիրառվում է նախապատվության իրավունքը*

Պարտապանը սովորաբար գրավ է դնում իր սեփական գույքը, բայց օրենքը չի արգելում, որ մի երրորդ անձ /գույքի սեփականատեր/ իր գույքը գրավ դնի պարտապանի պարտավորությունն ապահովելու համար



Գրավ կարող է դրվել ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույք

Գրավ կարող է դրվել պետական գրանցման ենթարկված, շրջանառությունից չհանված ցանկացած անշարժ գույք, այդ թվում հողամասեր, ձեռնարկություններ, շենքեր, շինու – թյուններ, բնակելի տներ և բնակարաններ, ամատանոցներ, այգետնակներ ...



Եթե գրավ դրված գույք է, այն մնում է գրավատուի մոտ, մնացած իրերը գրավատուի և գրավառուի համաձայնությամբ կարող են մնալ կամ գրավատուի մոտ կամ հանձնվել գրավառուին

Եթե գրավ դրված գույքը հանձնվում է գրավառուին, ապա վերջինս պարտավոր է այն պահել պատշաճ կերպով: Նա պատասխանատու է գույքի անվթարության համար, եթե չապացուցի, որ այն կորել կամ փչացել է ոչ իր մեղքով

Կոշտ գրավ է հանդիսանում այն գրավը երբ գույքը գրավառուի փականքի տակ է կամ իրի վրա գրավառուն թողնում է նշաններ, որոնք ցույց են տալիս, որ այդ գույքը գրավի առարկա է



©ThePhotoFile/E Elberfeld 1995

Եթե գույքը հանձնված է գրավառուին, ապա վերջինս այն կարող է օգտագործել միայն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ գրավառուին պարբերաբար հաշվետվություն ներկայացնելով օգտագործման մասին



Գրավատուն կամ գրավառուն, կախված թե ում մոտ է գտնվում գրավ դրված գույքը, պարտավոր է գրավ դրված գույքը լրիվ արժեքով ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից, իսկ եթե դրա լրիվ արժեքը գերազանցում է գրավով ապահովված պահանջի չափը՝ դրանից ոչ պակաս գումարով

Եթե գրավի առարկան հանձնվել է գրավառուին, նա համարվում է օրինական տիրապետող

Հաջորդող գրավ

- Գրավ դրված գույքը կարող է դառնալ այլ գրավի առարկա (հաջորդող գրավ):
- Գրավ դրված գույքը այլ գրավի (հաջորդող գրավի) առարկա դարձնելու գրավատուի իրավունքը սահմանափակող համաձայնությունն առոչինչ է:
- Հաջորդող գրավի դեպքում նոր գրավատուի պահանջները բավարարվում են գրավի առարկայի արժեքից նախորդ գրավատուի պահանջները բավարարելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նոր և նախորդ բոլոր գրավատուների միջև կնքված պայմանագրով:
- Եթե նոր և նախորդ բոլոր գրավատուների միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա պարտապանի կողմից **նոր գրավատուի** հանդեպ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նոր գրավատուն **մինչև գրավի առարկայի բռնագանձման գործընթաց** սկսելը պարտավոր է նախորդ գրավատուին ծանուցել պարտապանի կողմից իր հանդեպ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքի մասին՝ այդ մասին տեղեկանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ծանուցումն ստանալու պահից նախորդ **գրավառուն** իրավունք ունի



չձեռնարկելու որևէ գործողություն գրավի առարկայի հետ կապված կամ



սկսելու գրավի առարկայի բռնագանձման գործընթացը, որի դեպքում նոր գրավառուն այլևս իրավասու չէ սկսելու բռնագանձման գործընթաց կամ



գնելու գրավի առարկա գույքը կամ



նոր գրավառուից գնելու գրավով ապահովված պարտավորությունը՝ ՀՀ քաղ. օր-ի պարտավորության մեջ անձանց փոփոխության կանոններով, և դադարեցնելու բռնագանձման գործընթացը կամ



առաջարկելու նոր գրավառուին ամբողջությամբ կատարել իր (նախորդ գրավառուի) նկատմամբ ունեցած պարտապանի պարտավորությունը կամ



համաձայնություն տալու նոր գրավառուի կողմից բռնագանձման արդյունքում գրավի առարկան երրորդ անձի օտարելուն, որի դեպքում նախորդ գրավառուի գրավի իրավունքը գույքի նկատմամբ պահպանվում է

- Նախորդ գրավառուն պարտավոր է իր իրավունքների իրականացման որոշում կայացնելու մասին տեղեկացնել նոր գրավառուին ծանուցումն ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում
- Նոր գրավառուն պարտավոր է պարտապանի կողմից իր հանդեպ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում առաջնորդվել նախորդ գրավառուի կայացրած որոշմամբ
- Եթե նոր և նախորդ բոլոր գրավառուների միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ, մի քանի նախորդ գրավառուների առկայության դեպքում նոր գրավառուն պարտավոր է պարտապանի կողմից իր հանդեպ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում գրավի առարկայի բռնագանձման գործընթաց սկսելուց առաջ ծանուցել իրեն նախորդող բոլոր նախորդ գրավառուներին և առաջնորդվել նախորդ գրավառուների կայացրած որոշմամբ՝ ըստ նախորդ գրավառուների հաջորդականության:

Գրավի իրավունքը ծագում է

օրենքի

սպանագրի

Օրենքի հիման վրա գրավը ծագում է, եթե օրենքում նախատեսված է, թե ինչ գույք է ճանաչվում գրավ դրված և որ պարտավորության կատարումն է ապահովում այն /հոդ. 227/

Օր. ապառիկ առուծախ

Որպես կանոն գրավի իրավունքը ծագում է սպանագրի կնքման պահից: Եթե գրավի առարկան պետք է հանձնվի գրավառուին, գրավի իրավունքը ծագում է գույքը նրան հանձնելու պահից

գրավի ծագման հիմքը սպանագիրն է



ՀՀ քաղ. օր-ը գրավի
պայմանագրի ձևին և
բովանդակությանը
ներկայացնում է հատուկ
պահանջներ

*Պահանջվում է մատնանշել կողմերի անունները,
բնակության վայրը, գրավի առարկան և դրա գնահատումը,
գրավով ապահովված պարտավորության էությունը, չափը,
կատարման ժամկետը, ցուցում այն մասին, թե ում մոտ է
գտնվելու գրավի առարկան*

Գրավի պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, օրենքով
նախատեսված դեպքերում ենթարկվի նոտարական վավերաց-
ման, իսկ գրավի իրավունքը՝ պետական գրանցման:

Այս կանոնները չպահպանելը հանգեցնում է գրավի
պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առոչինչ է
/ՀՀ քաղ. օր-ի 234 հոդ./

Այն կողմը, որի մոտ գտնվում է գրավի
առարկան պատասխանատու է նրա
կորստի կամ փչացման համար, եթե
չապացուցի սեփական մեղքի բացա-
կայությունը



Գրավառուն, եթե առարկան
հանձնվել է իրեն
պատասխանատու է գրավի
առարկայի կորստյան համար
իրական արժեքի չափով

վնասվածքի համար՝ այն չափով, որ չափով պակասել
է գրավի առարկայի արժեքը, անկախ գնահատման
գումարից

Գրավատուն, եթե գրավով ապահովված պարտավորության պարտապանն է իրավունք ունի գրավի առարկայի կորստյան կամ վնասման հետևանքով առաջացած վնասների գումարը հաշվանցել գրավով ապահովված պարտավորությունը մարելու համար, եթե գրավի առարկան ոչնչացել կամ վնասվել է գրավատուի մեղքով



Գրավի առարկայի նկատմամբ օրենքով սահմանված հիմքով սեփականության իրավունքի դադարման /ռեկվիզիցիա/ դեպքում գրավատուն պարտավոր է գրավի առարկան փոխարինել այլ առարկայով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Եթե այլ բան չի նախատեսված պայմանագրով և չի բխում գրավի էությունից, գրավատուն իրավունք ունի օգտվել առարկայից նրա նշանակությանը համապատասխան՝ այդ թվում ստանալ պտուղներ և եկամուտներ:

Գրավատուն իրավունք ունի

գրավի առարկան օտարելու, այն տրամադրելու
վարձակալության կամ անհատույց օգտագործման
կամ տնօրինելու այլ կերպ, եթե այլ բան նախատես-
ված չէ օրենքով կամ պայմանագրով

հողամասը տրամադրել կառուցապատման
իրավունքով միայն գրավառուի
համաձայնությամբ

գրավ դրված գույքը կտակելու գրավատուի
իրավունքը սահմանափակելու համաձայնությունն
առոչինչ է

ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի թիվ ԵԿԴ/2013/02/12 որոշում
ՀՀ քաղ. օր-ի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառուն գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի իրազեկումը գրավատուի պարտականությունն է (ՎԴ3/0092/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2010 թվականի որոշում):

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդ. 9-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից:

Ուստի, մեկից ավելի գրավատուների առկայության դեպքում գրավառուն պատշաճ ծանուցման պարտականություն կրում է յուրաքանչյուր գրավատուի նկատմամբ: Գրավի առարկան իրացնելիս անձը զրկվում է սեփականության իրավունքից արտադատական կարգով, որը բացառություն է ընդհանուր՝ դատական կարգով սեփականության իրավունքից զրկվելու կանոնից: Հետևաբար սեփականատիրոջ՝ գույքի իրացման վերաբերյալ ծանուցված լինելու իրավունքը, առավելագույն պաշտպանության են ենթարկված վերոնշյալ իրավակարգավորմամբ:

Գրավառուն իր պահանջի բավարարման



նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել և իրացնել այն գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե՝

1. դա նախատեսված է գրավի պայմանագրով
2. առկա է գրավատուի և գրավառուի միջև կնքված գրավոր համաձայնություն և անհրաժեշտության դեպքում՝ III անձի համաձայնությունը

Առանց դատարան դիմելու գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու մասին համաձայնության բացակայության դեպքում, գրավ դրված գույքի հաշվին գրավառուի պահանջները բավարարվում են դատարանի վճռով

Գրավ դրված գույքը իրացվում է հրապարակային սակարկություններով



Նոտարական կարգով վավերացրած պայմանագրով կամ գրավատուի և գրավառուի միջև կնքված նոտարական վավերացված համաձայնությամբ կարող է սահմանվել գրավ դրված գույքի իրացման /վաճառքի/ այլ կարգ

Աճուրդի ընթացքում գույքի մեկնարկային գնի ավելացում չկատարվելու պատճառով աճուրդը չկայացած համարվելու դեպքում, գրավառուն 7 օրվա ընթացքում իրավունք ունի պահանջելու գրավ դրված գույքը հանձնել իրեն՝ վճարելով գրավ դրված գույքի իրացման ծախսերը



ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի թիվ ԵԿԴ/1010/02/12 գործով որոշում

ՀՀ քաղ. օր-քի 249-րդ հոդ. 2-րդ կետի 3-րդ պարբերության 2-րդ նախադասության համաձայն՝ **գրավառուն պարտավոր է գրավի առարկան իրացնել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:**

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության (ստանդարտացման ազգային մարմնի) 29.06.2006 թվականի թիվ 146-Ա հրամանով գործողության մեջ դրված Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման թիվ ՀՍՏ 252-2006 ստանդարտի համաձայն՝ լիկվիդացիոն արժեքն անշարժ գույքի արժեքն է, երբ այն պետք է վաճառվի նմանատիպ անշարժ գույքի վաճառքի համար շուկայում ներկայացման նախատեսված ժամկետից ավելի կարճ ժամանակահատվածում:

Նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի գրավ դրված գույքը տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնի հաշվարկով հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց դարձնել իր սեփականությունը կամ հանձնել երրորդ անձին ի սեփականություն:

Վերը նշվածից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավադրված անշարժ գույքն իրացնելիս տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գինը կարող է լինել **միայն դրա արագ վաճառքի գինը**, այսինքն՝ լիկվիդացիոն արժեքը, քանի որ միայն նման ձևով է հնարավոր ապահովել գրավի առարկայի արագ իրացումն ու գրավառուի պահանջների բավարարումը:

ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի թիվ ԵԿԴ/1010/02/12 որոշում

Վճռաբեկ դատարանն անդրադառնում է հետևյալ իրավական խնդրին.
Երբ պայմանագրով նախատեսված է գրավառուի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու կարգ, արդյո՞ք Բանկն իրավունք ունի իր պահանջի բավարարման նպատակով դիմել դատարան գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է որ նույնիսկ ՀՀ քաղ. օր-ի 249-րդ հոդ. անձին իր իրավունքների պաշտպանության լրացուցիչ եղանակ ընձեռելու պայմաններում վերջինս իր հայեցողությամբ է իրականացնում իր իրավունքների պաշտպանությունը: Ուստի նյութական իրավունքի որևէ նորմ չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ, իրավական այլ ակտերով և միջազգային պայմանագրերով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը սահմանափակող դրույթ (թիվ 3-678(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը): Այսինքն՝ չնայած այն հանգամանքին, որ Բանկի և պատասխանողների միջև կնքված պայմանագիրը նախատեսում է առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու կարգ, սակայն դա հանդիսանում է ոչ թե Բանկի պարտականությունը, այլ նրա իրավունքը, հետևաբար վարկառուն չի կարող պարտադրել Բանկին, թե վերջինս օրենքով նախատեսված պաշտպանության որ եղանակն ընտրի:

Պարտապանը կամ երրորդ անձ հանդիսացող գրավատուն իրավունք ունի



ցանկացած ժամանակ դադարեցնել բռնագանձումը և իրացումը՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրամասը, որի կատարումը կետանցել է

Այդ իրավունքը սահմանափակող
ցանկացած համաձայնություն առոչինչ է



Անձը, որի պահանջով դադարեցվել է գրավ դրված գույքի բռնագանձումը կամ իրացումը, պարտավոր է գրավատունին հատուցել այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և այն իրացնելու կապակցությամբ կատարած ծախսերը

Գրավի իրավունքը դադարում է

Գրավով ապահովված պարտավորության կատարմամբ



ՎԱՂԱԺԱՄԿԵՏ - եթե գրավառուն կոպիտ
կերպով խախտում է գրավատուի հաշվին
գրավի ապահովագրումը, չի ապահովում գրավ դրված գույքի
պահպանությունը, գրավատուին անհապաղ չի հայտնում գույքի
վնասման, փչացման կամ կորստյան վտանգի մասին

ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՉՆՉԱՑՄԱՄԲ, եթե գրավատուն
խելամիտ ժամկետում այն չի վերականգնում կամ փոխարինում

Գրավի առարկայի օրենքով սահմանված կարգով ԻՐԱՑՎԵԼՈՒ
դեպքում

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը
նախատեսում է գրավի հետևյալ
տեսակները

Գրավական

Գրավատուն
հանձնված գույքի գրավ

Իրավունքի գրավ

Դրամական միջոցների
գրավ

Կոշտ գրավ

Շրջանառության մեջ
գտնվող ապրանքների
գրավ

Հիպոթեք

Գրավական է

համարվում այն գրավը, որի առարկան անցնում է գրավատուի տիրապետմանը

Գրավատուն հանձնված գույքի գրավ

Անձնական օգտագործման
շարժական գույքը քաղաքացիներից
գրավ ընդունող՝ ի սպասիոփուումն
կարճաժամկետ վարկերի, որպես
գործարարական գործունեության
իրականացում են դրա համար
թույլտվություն (լիցենզիա) ունետող
մասնագիտացված կադմակերպու-
թյունները՝ ԳԼԱՎԱՏՆԵՄԸ (լոմբարդ)



www.foralombard-auto.ru

fora-lombard@mail.ru

ФОРА-ЛОМБАРД

КРЕДИТЫ ПОД ЗАЛОГ

АВТОМОБИЛЕЙ ЮВЕЛИРНЫХ ИЗДЕЛИЙ
МЕХОВЫХ ИЗДЕЛИЙ АУДИО-ВИДЕО ТЕХНИКИ

Генерала Кузнецова, д.27, корп.1

786-4580

(вход со двора)

*Գրավատուն հանձնված գույքի
գրավի պայմանագիրը
ձևակերպվում է գրավատունս
տալու միջոցով*

Գրավատունը պարտավոր է
գրավ դրված գույքը ապահովագրել լրիվ արժեքով

Իրավունք չունի
գրավ դրված գույքն օգտագործել կամ տնօրինել

Պատասխանատու է
գույքի կորստի կամ վնասման համար...

Գրավով ապահովված վարկի գումարը
սահմանված ժամկետում չվերադարձվելու
դեպքում գրավատունն իրավունք ունի գուքն
իրացնել հրապարակային սակարկություններով

Դրանից հետո գրավատուի նկատմամբ գրավատան պահանջները մարվում են, եթե անգամ գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարն անբավարար է դրանք լրիվ բավարարելու համար

Վաճառքից ստացված գումարից մարվում է վարկը, տոկոսները, պահման և ապահովագրական ծախսերը, աճուրդի համար կատարված ծախսերը



Շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ

Որպես գրավառու հանդես է գալիս բանկը

Գրավի առարկա ապրանքները թողնվում են գրավատուի մոտ՝ նրան իրավունք՝ վերապահելով փոխել ապրանքների կազմը և բնեղեն ձևը, պայմանով, որ

դրանց ընդհանուր արժեքը չնվազի գրավի պայմանագրում նշված գումարից:

Արժեքի նվազեցումը թույլա-տրվում է պարտավորության կատարմանը համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով



Գրավատուն պարտավոր է վարել շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրառման գիրք



Գրավատուի կողմից շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավի պայմանները խախտելու դեպքում գրավատուն իրավունք ունի գրավ դրված ապրանքների վրա իր նշանները (կնիքը) դնելու միջոցով կասեցնել դրանց հետ կատարվող գործառնությունները, մինչև կվերացվեն խախտումները



Իրավունքի գրավի

դեպքում գրավի առարկա են
դառնում օտարելի գույքային
իրավունքները

ընկերակցության կամ ընկերության
կանոնադրական կապիտալում կամ արտադրական
կոոպերատիվի փայտափափ կապիտալում
մասնակցության իրավունքը, բաժնի իրավունքը,
պարտքը պահանջելու իրավունքը հեղինակային,
գյուտարարական և այլ օտարման ենթակա
իրավունքները



Գրավի իրավունքի ուժով գույքից (օգտագործումից,
շահագործումից) ստացվող եկամուտներով առաջին
հերթին բավարարվում են գրավառուի պահանջները
Օրինակ, պարտապանը գրավ է դնում բաժնետոմսերից
շահաբաժին ստանալու իրավունքը ...

Գրավ դրված իրավունքի պարտապանը պետք է տեղեկացվի գրավի մասին, որպեսզի վճարումը կատարի գրավառուին

Եթե գրավ դրվող իրավունքը հավաստվում է
փաստաթղթերով, ապա գրավի պայմանագիրը կարող է
ձևակերպվել իրավունքը սահմանող փաստաթղթի
փոխանցումով



Փաստաթղթային արժեթղթերով վավերացված գույքային իրավունքի գրավի դեպքում արժեթուղթը հանձնվում է գրավառուին, բանկին կամ նոտարիատի դեպոզիտ, եթե պայմանագրով այլ բան չի նախատեսված

Ժամկետային իրավունքները գրավի
առարկա կարող են լինել միայն մինչև
Ժամկետի ավարտը

Դրամական միջոցների գրավի դեպքում դրամական

միջոցները պահվում են բանկի կամ նոտարիատի դեպոզիտային հաշվում: Այդ գումարի վրա հաշվարկվող տոկոսները պատկանում են գրավատուին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով

Գրավ դրված արժեթղթերի մարման դեպքում գրավի առարկա են դառնում մարման արդյունքում գոյացած դրամական միջոցները

Կոշտ գրավ է



համարվում այն գրավը, որի առարկան թողնվում է գրավատուի մոտ գրավառուի փականի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով կամ որի նկատմամբ գրավի իրավունքը գրանցվում է օրենքով սահմանված կարգով

ՀԻՊՈԹԵԲ Է

համարվում անշարժ գույքի, ինչպես նաև

հողամասի կառուցապատման իրավունքի գրավը



հիպոթեքի պայմանագրով կարող
է գրավ դրվել ցանկացած անշարժ
գույք

*Հիպոթեքի առարկան որոշվում է
պայմանագրում դրա անվան, գտնվելու
վայրի նշումով և այդ*

առարկայի նույնացման համար բավարար նկարագրությամբ

Եթե հիպոթեքի առարկան գրավատուին պատկանող
իրավունքն է, ապա պայմանագրում պետք է նկարագրվի
այդ իրավունքի ծագման հիմքը, ինչպես նաև անշարժ գույքը,
որին վերաբերում է այդ իրավունքը և իրավունքը գրանցող
մարմինը

Հիպոթեքի առարկա կարող են դառնալ միայն քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատկանող հողամասերը

Հողամասի հիպոթեքի դեպքում գրավի իրավունքն օրենքի ուժով տարածվում է նաև այդ հողամասում գտնվող կամ կառուցվող գրավատուի շենքերի և շինությունների վրա



Հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության դեպքում հիպոթեք կարող է սահմանվել այն հողամասի նկատմամբ, որը բնեղենով առանձնացված է ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասից՝ որպես առանձին գույք և դրա նկատմամբ իրավունքները գրանցված են օրենքով սահմանված կարգով

Քաղ. օր. 267 հոդ. համաձայն գրավատուն իրավունք ունի առանց գրավառուի համաձայնության, գրավադրված հողամասում կառուցել շենքեր և շինություններ, եթե այլ բան նախատեսված չէ հիպոթեքի պայմանագրով:

Եթե հիպոթեք սահմանվել է այն հողամասի նկատմամբ, որը ծանրաբեռնված է այլ անձի կառուցապատման իրավունքով, ապա կաառուցապատողի իրավունքները պահպանվում են նույն ծավալով և ժամկետով



Հողամասի վրա բռնագանձում տարածելու և այն իրացվելու դեպքում հողամասը ձեռք բերողին իրավունքներից բացի, անցնում են այն պարտրականությունները, որոնք կառուցապատողի հանդեպ ունեն գրավատուն

Բնակելի տների (բնակարանների) շենքերի և շինությունների հիպոթեք

Հիպոթեքի առարկա կարող են հանդիսանալ միայն քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատկանող բնակելի տները, բնակարանները, շենքերը և շինությունները



Հյուրանոցները, հանրակացարանները, հանգստյան տները, ամառանոցները, այգետնակները և մշտական բնակության համար չնախատեսված շենքերն ու շինությունները կարող են հիպոթեքի առարկա լինել ընդհանուր հիմքերով /ՀՀ քաղ.օր-ի 269 հոդ./

Բազմաբնակարան շենքի հիպոթեքի դեպքում բնակարանի
հետ միասին օրենքի ուժով գրավ դրված է համարվում
հողամասի և բազմաբնակարան շենքի ընդհանուր գույքի
բաժնային սեփականության իրավունքում
համապատասխան բաժինը

Կառուցվող բազմաբնակարան շենքի բնակարանի հիպոթեքի

դեպքում, մինչև սահմանված
կարգով շենքի շահագործման
ակտի ձևակերպումը,
բնակարանի հիպոթեքի
իրավունքը տարածվում է
բաժնային սեփականության
իրավունքով հողամասի
համապատասխան բաժնի վրա



Բնակելի տունը, շենքը կամ շինությունը
կառուցելու, վերակառուցելու, վերանորոգելու

արդիականացնելու համար
վարկ տրամադրելիս՝ **հիպոթեքի**
պայմանագրով կարող է
նախատեսվել պարտավորության
ապահովում հողամասով,
անավարտ շինարարությամբ,
շինարարության համար ձեռք
բերված նյութերով և
սարքավորումներով



Օգտագործման իրավունքով հողամասերում շենք կամ
շինություն կառուցելու, վերակառուցելու համար վարկ
տրամադրելիս **հիպոթեքի** պայմանագրով կարող է
նախատեսվել պարտավորության ապահովում
կառուցապատման իրավունքով և կառուցապատման համար
ձեռք բերված նյութերով և սարքավորումներով



Այն դեպքերում, երբ բնակարանի գրավով ապահովված պարտավորությունը չի կատարվում, բռնագանձում է տարածվում գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա

Բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելու հիմնական առանձնահատկություններն են՝

- բռնագանձում տարածելը հիմք չէ օգտագործման իրավունք ունեցող անձանց վտարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի պահանջ է ներկայացնում նոր սեփականատերը
- այդ անձինք և գրավատուն պարտավոր են իրացված բնակելի տունը, բնակարանը սեփականատիրոջ պահանջով ազատել մեկ ամսվա ընթացքում



Երաշխավորություն

Երաշխավորությունը պարտավորությունների կատարման ապահովման ավանդական միջոցներից է



*Երաշխավորության պայմանագրով
երաշխավորը պարտավորվում է այլ
անձի պարտատիրոջ առջև
պատասխանատվություն կրել այդ անձի
կողմից իր պարտավորությունը լրիվ
կամ մասնակի չկատարելու համար*

Երաշխավորությամբ կարող է ապահովվել ինչպես արդեն
իսկ ձևավորված պարտավորության, այնպես էլ
ապագայում ծագելիք պարտավորության կատարումը



Երաշխավորության ապահովող բնույթն
արտահայտվում է՝
ձևավորվում է լրացուցիչ
պարտավորություն, որը ապահովում է
հիմնական պարտավորությունը

Պարտատերը հնարավորություն է ստանում

- հիմնական պարտավորությունը չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում իր պահանջները ներկայացնել երաշխավորին
- իր ցանկությամբ բավարարում պահանջել ինչպես պարտապանից և երաշխավորից միասին, այնպես էլ իր ընտրությամբ՝ կամ պարտապանից, կամ երաշխավորից
- երաշխավորության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր: Գրավոր ձևը չպահպանելը այն դարձնում է անվավեր:



Երաշխավորությունը կարող է ձևակերպվել
հիմնական պայմանագրի տեքստում կամ առանձին
փաստաթղթով



Գլխավոր պայմանագրի անվավերության դեպքում
անվավեր է նաև երաշխավորության պայմանագիրը



*Երբ երաշխավորի դեմ հայց է հարուցվում, նա
պետք է գործին մասնակից դարձնել
պարտապանին: Հակառակ դեպքում
պարտապանն իրավունք ունի երաշխավորի
հետադարձ պահանջի դեմ անելու պարտատիրոջ
նկատմամբ ունեցած բոլոր առարկությունները*

Երաշխավորի կողմից պարտատիրոջ հանդեպ գլխավոր
պարտավորության կատարումը դադարեցնում է հիմնական
պարտավորությունը և երաշխավորին են անցնում
պարտատիրոջ բոլոր իրավունքներն այն ծավալով, որով
երաշխավորը բավարարել է պարտատիրոջ պահանջը

Պարտապանի կողմից երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն, եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով:

Երաշխավորը պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ պարտապանը՝ ներառյալ տոկոսներ վճարելը, դատական ծախսերը և պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ պարտատիրոջ այլ վնասները:


Երաշխավորը պարտապանին մատուցած ծառայությունների համար ունի վարձատրության իրավունք, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

ԵՇԴ/0700/02/12 քաղ. գործով ՀՀ վճռաբեկ դատարանի
18.07.2014թ. որոշում

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ պարտատերը սուբսիդիար պատասխանատվություն ստանձնած անձին պարտավորության կատարման պահանջ կարող է ներկայացնել միայն հիմնական պարտապանին այդպիսի պահանջ ներկայացնելուց հետո և միայն այն չափով, որ չափով պարտավորությունը չի կատարվել վերջինիս կողմից: Այսինքն՝ սուբսիդիար պատասխանատվություն կրող անձին պահանջը կարող է ներկայացվել, եթե

- հիմնական պարտապանը հրաժարվել է պարտատիրոջ պահանջը բավարարելուց,
- կամ պարտատերը ողջամիտ ժամկետում չի ստացել նրան ներկայացված պահանջի պատասխանը:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ յուրաքանչյուր դեպքում երաշխավորի պատասխանատվության բնույթը և ծավալը հնարավոր է պարզել՝ երաշխավորության պայմանագրի դրույթները վերլուծելով և գնահատելով գործող իրավակարգավորման և վերոնշյալ վերլուծությունների համատեքստում:



Պարտապանի փոխարեն պարտավորությունը
կատարած երաշխավորը ձեռք է բերում ռեգրեսի
իրավունք

Պարտապանը, որը կատարել է
պարտավորությունը, պարտավոր է այդ մասին

անհապաղ տեղեկացնել երաշխավորին: Հակառակ դեպքում
պարտավորությունը կատարած երաշխավորը պահպանում է
պարտապանին հետադարձ պահանջ ներկայացնելու իրավունքը:

Քաղ. օր. 382 հոդ. համաձայն երաշխավորությունը դադարում է

1. դրանով ապահովված պարտավորությունը դադարելու,
ինչպես նաև առանց երաշխավորի համաձայնության
պարտավորությունը փոփոխելու դեպքում,
որը հանգեցրել է նրա պարտավորության
մեծացմանը կամ նրա համար
անբարենպաստ հետևանքների



2. երաշխավորությամբ ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելով, եթե երաշխավորը պարտատիրոջը համաձայնություն չի տվել պատասխանատվություն կրել նոր պարտապանի համար,
3. եթե պարտատերը հրաժարվել է ընդունել պարտապանի կամ երաշխավորի առաջարկած պատշաճ կատարումը
4. երաշխավորության պայմանագրում նշված ժամկետի ավարտով:

Նման ժամկետի բացակայության դեպքում երաշխավորությունը դադարում է, եթե պարտատերը պարտավորության կատարման ժամկետը լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չի հարուցում

Եթե հիմնական պարտավորության կատարման ժամկետ նշված չէ և չի կարող որոշվել կամ որոշվել է պահանջի պահով, երաշխավորությունը դադարում է, եթե պայմանագիր կնքելու օրվանից երկու տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չհարուցվում:

Երաշխիք

BANK

Երաշխիք տվող անձը (բանկը, այլ վարկային կամ
ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի
(պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն
է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ
(բենեֆիցիարի) հանդեպ՝ երաշխիքով ստանձնած
պարտավորության պայմաններին համապատասխան,
բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս
կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս

Ապահովման այս միջոցն այլ միջոցներից տարբերվում է որոշակի առանձնահատկություններով



1. Երաշխավոր կարող են հանդիսանալ վարկավորելու իրավունք ունեցող կազմակերպությունը

2. Երաշխիքը միակողմ պարտավորություն է, որով երաշխիք տվողը պարտավորվում է բենեֆիցիարին վճարել որոշակի գումար

3. այդ պարտավորությունն անկախ է հիմնական պարտավորությունից

4. Երաշխիք տալու համար պրինցիպալը երաշխիք տված անձին վճարում է պայմանավորված վարձատրությունը

Երաշխիքը կարող է լինել

անհետկանչելի

հետկանչելի

Անհետկանչելի երաշխիքը
առանց բենեֆիցիարի
համաձայնության
փոփոխվել չի կարող

հետկանչելի երաշխիքը
ցանկացած պահի կարող է
փոփոխվել

ՀՀ քաղ. օր-ը նախատեսում է
անհետկանչելի երաշխիք՝ կողմերին
իրավունք վերապահելով կայացնել այլ
համաձայնություն /հոդ. 386/

Երաշխիքն ուժի մեջ է մտնում տալու օրվանից

Երաշխիքով դրամական գումար վճարելու բենեֆիցիարի պահանջը պետք է երաշխիք տված անձին ներկայացվի գրավոր՝ կցելով երաշխիքում նշված փաստաթղթերը

Բենեֆիցիարի պահանջը ստանալուց հետո երաշխիք տվողը այդ մասին անհապաղ պետք է հայտնի պրինցիպալին և նրան հանձնի պահանջի պատճեն՝ դրան վերաբերող փաստաթղթերով

Նա կարող է բենեֆիցիարի պահանջը մերժել միայն

եթե պահանջը կամ դրան կից փաստաթղթերը չեն համապատասխանում երաշխիքի պայմաններին

եթե պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետն ավարտվելուց հետո

Այն դեպքում, երբ մինչև պահանջը բավարարելը
երաշխիք տված անձին հայտնի է դարձել, որ
երաշխիքով ապահովված հիմնական
պարտավորությունը լրիվ կամ համապատասխան մասով
կատարվել է, դադարել է կամ անվավեր է, նա չի կարող
ստանձնած պարտավորությունը չկատարել



Նա իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնել
բենեֆիցիարին և պրինցիպալին

Նման հաղորդումից հետո, եթե բենեֆիցիարը
ներկայացնի կրկնակի պահանջ, ապա երաշխիք տվող
անձը պարտավոր է այն բավարարել /հ.391/

Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը



Երաշխիք տվող անձի պարտավորությունը
սահմանափակվում է այն գումարով, որով տրված է երաշխիքը



Եթե երաշխիք տվող անձը չի կատարում կամ անբարեխիղճ է կատարում երաշխիքի պարտավորությունը, ապա նրա պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարի վճարմամբ

Բենեֆիցիարի պահանջը բավարարելուց հետո երաշխիք տվող անձը իր վճարած գումարը ռեգրեսային պահանջով կարող է պրինցիպալից հետ ստանալ, եթե այդպիսի իրավունք նախատեսված է երաշխիք տված անձի և պրինցիպալի համաձայնությամբ

Այդպիսի համաձայնության դեպքում էլ երաշխիք տվողն իրավունք չունի պրինցիպալից պահանջել երաշխիքի պայմաններին չհամապատասխանող կամ իր պարտավորությունը խախտելու համար բենեֆիցիարին վճարած գումարները, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիք տվող անձի և պրինցիպալի համաձայնությամբ / ՀՀ քաղ. օր-ի 394 հոդ. /

Երաշխիքը դադարում է

1. Բենեֆիցիարին վճարելով այն գումարը, որով տրված է երաշխիքը
2. Երաշխիքով որոշած ժամկետի ավարտով
3. Բենեֆիցիարի կողմից իր իրավունքներից հրաժարվելու և երաշխիքը երաշխիք տված անձին վերադարձնելու հետևանքով
4. Բենեֆիցիարի կողմից երաշխիքով իր իրավունքներից հրաժարվելու և երաշխիք տվողին պարտավորությունից ազատելու մասին գրավոր տեղեկացնելու հետևանքով

Երաշխիքի դադարման մասին երաշխիք տվողը պարտավոր է անհապաղ տեղեկացնել պրինցիպալին



Կանխավճար (նախավճար)

Կանխավճար է համարվում այն դրամական գումարը, որը պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարումների հաշվին տալիս է մյուս կողմին ի ապացույց պայմա-նագրի կնքման և ի ապահովում նրա կատարման

Կանխավճարին բնորոշ
առանձնահատկությունները

1. նախորոք հանձնվում է պարտատիրոջը և հանդիսանում է պարտավորության որոշակի մասի կատարում

2. հանձնված դրամական գումարը կարող է կանխավճար համարվել, եթե կողմերի միջև գոյություն ունեն պայմանագրային հարաբերություններ



3. դրամական գումարը կարող է կանխավճար ճանաչվել, եթե կողմերը հատկապես պայմանավորվել են, որ այդ գումարը ոչ միայն հաստատում է պայմանագրի կնքված լինելը և հաշվվում է պարտավորության կատարման մեջ, այլև կոչված է ապահովելու պարտավորության կատարումը



*Կանխավճարի վերաբերյալ համաձայնու –
թյունը պետք է կնքվի գրավոր և տեքստում
անպայման պետք է նշվի, որ գումարը
տրվում է որպես կանխավճար, հակառակ
դեպքում այն կհամարվի ավանս*

Կանխավճարի ապահովող բնույթն արտահայտվում է

- եթե պայմանագրի չկատարման համար մեղավոր է կանխավճար տվողը, ապա կանխավճարը մնում է մյուս կողմին

- եթե պարտավորության չկատարման համար մեղավոր է կանխավճար ստացողը, նա պարտավոր է մյուս կողմին վճարել կանխավճարի կրկնապատիկը

Բացի դրանից պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու կողմը պարտավոր է մյուս կողմին հատուցել վնասները հաշվակցելով կանխավճարի գումարը, եթե պայմանագրով այլ բան չի նախատեսված



Կանխավճարի վերաբերյալ համաձայնությունը պետք է լինի գրավոր և տեքստում անպայման պետք է նշվի, որ գումարը տրվում է որպես կանխավճար, հակառակ դեպքում այն կհամարվի ավանս, իսկ ավանսի նկատմամբ վերը շարադրված կանոնները չեն տարածվում:

Ինչպես կանխավճարը, այնպես էլ ավանսը տրվում է ի հաշիվ պայմանագրով կատարվելիք հետագա վճարումների: Սակայն ավանսը չի տրվում որպես պայմանագրի գոյությունը ապացուցող միջոց և չի հանդիսանում պարտավորության կատարումն ապահովող միջոց:

Ավանսը, որպես կանոն, տրվում է այն նպատակով, որ պարտապանը ունենա դրամական միջոցներ և պարտավորության կատարման հետ կապված անհրաժեշտ ծախսեր կատարի / շինարարական կապալ/

Պահում



Պահման էությունն այն է, որ պարտատերը, որի մոտ գտնվում է պարտապանին կամ նրա կողմից նշված անձին հանձնելու ենթակա գույք, իրավունք ունի պարտապանի կողմից տվյալ գույքի համար վճարման կամ դրա հետ կապված պարտատիրոջ ծախսերի և մյուս վճարների

հատուցման պարտականությունը ժամանակին չկատարելու դեպքում գույքը պահել իր մոտ մինչև համապատասխան պարտավորության կատարումը / ՀՀ քաղ. օր-ի 373 հոդ./



Պահումը կարող է կիրառվել երեք պայմանների միաժամանակյա առկայության դեպքում

1. առարկան պետք է հանդիսանա պարտապանին պատկանող այն գույքը, որը պարտատերը պետք է հանձնի նրան կամ նիս կողմից մատնանշված անձին
2. դրանով ապահովվում է այն պարտավորությունը, որով պարտապանը պարտավոր է վճարել այդ գույքի արժեքը կամ դրա հետ կապված պարտատիրոջ ծախսերը և մյուս վնասները
3. պահումով ապահովվող պարտավորությունը պարտապանը ժամանակին չի կատարել


*Պահումից պարտատերը կարող է օգտվել
անկախ պարտապանի հետ կնքված
պայմանագրով իրեն նման իրավունք
վերապահված լինելու հանգամանքից*

Պահումը, որպես ապահովման միջոց, չի կարող կիրառվել
միայն այն դեպքում, երբ կողմերի միջև կնքված
պայմանագրով նախատեսված է, որ պարտատերը
պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու
կամ կետանցելու դեպքում նրա գույքը պահելու իրավունք
չունի

*Գործարարների հարաբերությաններում
պահումը կարող է օգտագործվել ցանկացած
պարտավորության կատարումն ապահովելու
համար, թեկուզև դա կապված չլինի գույքի
համար վճարման կամ վնասների հատուցման
հետ*

Պահման, որպես պարտավորությունների
սպահովման միջոցի առանձնահատկություններից
մեկն էլ այն է, որ պարտատերը կարող է իր մոտ
գտնվող գույքը պահել
անգամ այն դեպքում, երբ դրա նկատմամբ իրավունք
է ձեռք բերել մի երրորդ անձ /լիզինգ/

*Եթե գույքը պահելու դեպքում էլ պարտապանը
չկատարի պարտավորությունը, ապա
պարտատերն իրավասու է պարտքի մարման
համար գույքի վրա բռնագանձում
տարածելու խնդրանքով դիմել դատարան*



Պահված գույքի նկատմամբ պահաանջները
բավարարվում են այդ գույքի արժեքից՝ գրավով
սպահովված միջոցների բավարարման համար
նախատեսված ծավալով և կարգով

Ապահովված իրավունքը

- Ապահովված իրավունքը օրենքի կամ պայմանագրի ուժով, ի ապահովումն պարտավորության կատարման, գույքի կամ գույքային իրավունքի կամ պարտավորական իրավունքի նկատմամբ պարտատիրոջ իրավունքն է
- Անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, բանկային հաշվի, դեպոզիտի (ավանդի), ինչպես նաև արժեթղթի գրավի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենսգրքով գրավի համար սահմանված կանոններով:
- Ապահովված իրավունքի առարկան կարող է լինել ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք, բացառությամբ շրջանառությունից հանված գույքի, պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված պահանջների, ներառյալ ալիմենտի, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջների, պետական (գանձապետական) անվանական այն արժեթղթերի, որոնք գրավադրման ենթակա չեն, և այն իրավունքների, որոնց զիջելն այլ անձի արգելված է օրենքով:



➤Ապահովված իրավունքը տարածվում է նաև այն գույքի վրա, որն ուղղակի կամ անուղղակի առաջանում է ապահովված իրավունքի առարկայի օգտագործումից, տիրապետումից կամ տնօրինումից, ինչպես նաև ապահովված իրավունքի առարկայի ապահովագրական փոխհատուցումից, բացառությամբ օրենքով և պայմանագրով սահմանված դեպքերի:

➤Ապահովված իրավունքը ծագում և գործում է պարտավորության ծագման պահից մինչև պարտավորության պատշաճ կատարումը:



Ապահովման պայմանագրով ապահովված իրավունքի առարկայի նկարագրությունը լինում է ընդհանուր կամ որոշակի: Այն դեպքում, երբ ապահովված իրավունքի առարկան հնարավոր է որոշել որոշիչ կամ նկարագրական հատկանիշներով, ապա ապահովված իրավունքի առարկայի որոշակի նկարագրությունը պարտադիր է

Ապահովված իրավունքի առարկայի վրա առանց դատարան դիմելու բռնագանձումն իրականացվում է սույն օրենսգրքի 249 հոդվածով սահմանված կարգով, եթե՝

- 1) դա նախատեսված է պայմանագրով, կամ
- 2) առկա է ապահովված անձի (պարտատիրոջ) և պարտապանի միջև կնքված գրավոր համաձայնություն

“ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ” ՀՀ օրենքը



կարգավորում է շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման ոլորտում առաջացող հարաբերությունները, սահմանում է շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցում իրականացնող մարմնի իրավասությունները, շարժական գույքին առնչվող իրավունքների վերաբերյալ գրանցման առանձնահատկությունները և դրանց վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պայմաններն ու կարգը

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ և ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Քացաքացիաիրավական պատասխանատվության
հասկացությունը, տեսակները և նշանակությունը

Քացաքացիաիրավական պատասխանատվությունը
վրա է հասնում պարտավորությունը

չկատարելու

ոչ պատշաճ կատարելու




Պարտավորությունը չկատարված է համարվում, երբ պարտավորության սուբյեկտները ձեռնամուխ չեն լինում պարտավորության բովանդակությունը կազմող գործողությունների կատարմանը կամ կատարում են գործողություններ, որոնք պարտավոր էին չկատարել /ապրանք չեն հանձնում.../



Պարտավորությունը ոչ պատշաճ կատարված է համարվում, երբ կատարումը չի համապատասխանում օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին, նման պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող պահանջներին /անորակ ապրանքի հանձնում, վճարման կետանցում.../


Պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում անհրաժեշտություն է զգացվում իրավախախտողի նկատմամբ կիրառել այնպիսի միջոցներ, որոնք ապահովելով պատշաճ ներգործություն իրավունքի սուբյեկտներին հարկադրեն կատարելու պարտավորությունները կանխեն իրավախախտումները



Քաղ. օրենսդրությամբ նախատեսվում են անբարեխիղճ պարտապանի վրա ներգործելու տարբեր միջոցներ

Օպերատիվ
ներգործության

Պատասխանատվության



Քաղաքացիաիրավական պատասխանատվության էության և բնույթի մասին արտահայտվել են տարբեր տեսակետներ

- ✓ բոլոր պարտականությունների անշեղ, ճշգրիտ և առավելագույն նախաձեռնությամբ կատարում
- ✓ գործողությունների համար իրավունքով կարգավորվող հաշիվ տալու պարտականություն
- ✓ իրավախախտման համար սանկցիա է, որը իրավախախտի համար առաջացնում է բացասական հետևանքներ՝ զրկելով նրան սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներից կամ նրա վրա դնելով լրացուցիչ քաղաքացիաիրավական պարտականություններ
- ✓ սանկցիայի կիրառություն է և իրավունքը պաշտպանելու համար պետական հարկադրանք, որն առաջացնում է իրավունքի պահանջների խախտման համար նախատեսված հետևանքները դրանով իսկ արտահայտելով պետության և հասարակության բացասական ներգործությունը իրավախախտի նկատմամբ

Սանկցիայի հետ կապը պատասխանատվության ամենաէական հատկանիշն է, քանի որ սանկցիան պատասխանատվության նախադրյալն է:

Ցանկացած սանկցիայի կիրառությունն պատասխանատվությունն չէ, օրինակ՝ թերությունների վերացում պահանջելը, թերություններով չընդունելը բխում է պայմանագրային պարտավորության բովանդակությունից
Ցանկացած սանկցիայի կիրառությունն առաջացնում է անբարենպաստ հետևանքներ

Անբարենպաստ հետևանքները բաժանվում են 2 խմբի.
ա) սանկցիայի էությունից բխող հետևանքներ (տուժանքի և վնասների հատուցման հետևանքով առաջացող անբարենպաստ հետևանքներ) առաջացումը նախատեսված է օրենքով,
բ) հարակից, ուղեկցող անբարենպաստ հետևանքներ, որոնք առաջանում են թե՛ տուժանքի և վնասների, թե՛ այլ սանկցիաների կիրառման դեպքում (օրինակ՝ դատական ծախսեր, փոխադրման, վերանորոգման, պահպանության և այլ ծախսեր):

Առաջին տիպի անբարենպաստ հետևանքներ
առաջացնող սանկցիաները իրավախախտի վրա
ներգործելու հատուկ բնույթով տարբերվում են
պարտավորությունների կատարմանը հարկադրելու մյուս
միջոցներից և դրանց կիրառությունն էլ հանդիսանում է
պատասխանատվություն:

*Քաղաքացիաիրավական
պատասխանատվությունը հարկադրական
ներգործության ձև է, քաղաքացիաիրավական
հատուկ սանկցիաների կիրառություն, որն
իրավախախտողի համար անշահավետ
գույքային հետևանքներ առաջացնելուց բացի
հարկադրում է կատարել մինչև
իրավախախտումը գոյություն չունեցող
լրացուցիչ պարտավորություն*

Պատասխանատվություն իրականացնում է երեք հիմնական գործառույթ

փոխհատուցող



գույքային
ներգործության

նախականիտղ-դաստիարակչական

հարկադրում է ձեռնպահ մնալ պարտավորությունները չկատարելուց
կամ ոչ պատշաճ կատարելուց և միջոցներ ձեռնարկել իրավախախտման
վնասակար հետևանքները նվազեցնելու համար:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակները

Հատ քնույթի և ծագման հիմքերի

Պայմանագրային

- մինչև իրավախախտումը գոյություն ունեցող պարտ-ն խախտման համար /օրինակ/
- ձևը, չափը սահմանվում է ինչպես օրենքով, այնպես էլ կողմերի համաձայնությամբ
- կողմերը կարող են ավելացնել

Արտապայմանագրային

- պարտավորական հարաբե-րություններն առաջանում են իրավախախտումից հետո
- կիրառվում է ոչ թե պարտա-վորությունը խախտելու, այլ վնաս պատճառելու դեպքում
- ձևը, չափը սահմանվում է օրենքով

Ըստ իրավախախտում թույլ տված
պարտապանների միջև պատասխանատվությունը
բաշխելու եղանակների

Բաժնային

Համապարտ

Լրացուցիչ (սուբսիդիար)

ԲԱԺՆԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բաժնային պատասխանատվությունը կիրառվում է այն դեպքում, երբ պարտավորությունը խախտող յուրաքանչյուր պարտապան պարտատիրոջ առջև պատասխանատու է պարտավորության իր բաժինը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար

Բաժնային պատասխանատվությունը պատասխանատու անձանց բազմաթիվությամբ պարտավորությունների խախտման դեպքում կիրառվող հիմնական տեսակն է

Բաժնային պատասխանատվություն չի կիրառվում միայն այն դեպքերում, երբ օրենդրությամբ կամ պայմանագրով նախատեսված է համապարտ կամ լրացուցիչ պատասխանատվություն

Բաժնային պատասխանատվության դեպքում պարտապաններից յուրաքանչյուրը պատասխանատու է մյուսներին հավասար բաժիններով, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ պայմանագրի պայմաններից

Համապարտ պատասխանատվությունը

- ծագում է, եթե պարտավորության համապարտությունը կամ պահանջի համիրավությունը նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես երբ անբաժանելի է պարտավորության առարկան
- Պարտատերն իրավունք ունի պահանջ ներկայացնելու ինչպես բոլոր պարտապաններին համատեղ, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրին ինչպես ամբողջ ծավալով, այնպես էլ մի մասով
- Համապարտ պատասխանատվության փոխարեն օրենքով նախատեսված դեպքերում կարող է կիրառվել բաժնային պատասխանատվություն, բայց բաժնային պատասխանատվության փոխարեն համապարտ պատասխանատվություն կիրառվել չի կարող: Օրինակ, տուժողի դիմումի հիման վրա դատարանն իրավունք ունի համատեղ վնաս պատճառած անձանց վրա պատասխանատվություն դնել մասերով՝ մեղքի աստիճանին համապատասխանող չափերով
- Ձեռնարկատիրական գործունեության հետ կապված պարտավորությամբ մի քանի պարտապանների պարտավորությունները (հետևաբար նաև պատասխանատվությունը) համապարտ են, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պարտավորության պայմաններով

ՍՈՒԲՍԻԴԻԱԸ (լրացուցիչ)

ծագում է այն դեպքում, երբ հիմնական պարտապանի հետ միասին, օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում լրացուցիչ պատասանատվություն է կրում մեկ այլ անձ

Պարտատերն իրավունք չունի հիմնական պարտապանին ուղղված իր պահանջի բավարարումը պահանջել լրացուցիչ պատասխանատվություն կրող անձից, եթե այն կարող է բավարարվել հիմնական պարտապանի դեմ ուղղված հակընդդեմ պահանջի հաշվանցումով

✓ *պարտատերը պահանջը պետք է ներկայացնի հիմնական պարտապանին*

- 
- ✓ *հիմնական պարտապանը հրաժարվում է*
 - ✓ *բանական ժամկետում պահանջին չի պատասխանում*

➤ Ի տարբերություն պայմանագրային պատասխանատվության, արտապայմանագրային պատասխանատվության դեպքում լրացուցիչ պատասխանատվություն առաջանում է միայն այն դեպքում, երբ պատասխանողը չունի համապատասխան միջոցներ: Օրինակ 14-18 տար.

➤ դուստր ընկերության սնանկության դեպքում՝ հիմնական ընկերություն, լիակատար ընկերակցության՝ մասնակիցներ, արտադրական կոոպերատիվի անդամների համապարտ լրացուցիչ պատասխանատվություն և այլն

➤ Լրացուցիչ պատասխանատվությունից անհրաժեշտ է տարբերել պատասխանատվությունը երրորդ անձանց գործողությունների համար:

Այդ դեպքում պատասխանատվություն է կրում երրորդ անձանց կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն կրելու ռիսկը: Պարտատերը երրորդ անձի հետ պարտավորական հարաբերություններով կապված չէ և որևէ պահանջ նրան ներկայացնել չի կարող: Օրինակ հետադարձ պահանջ:

Քաղաքացիաիրավական պատասխանատվություն կարող է
կիրառվել այն դեպքում, երբ պարտավորության մասնակիցը չի
կատարում կամ ոչ պատշաճ է կատարում պարտավորությունը

Նույնիսկ եթե անձը պարտավորությունը չի կատարվել կամ ոչ
պատշաճ է կատարվել, նա կարող է պատասխանատվության
ենթարկվել միայն որոշակի պայմանների (հիմքերի)
առկայության դեպքում

*Պատասխանատվության
պայմանները (հիմքերը)*

Հակաօրինական
վարքագիծ

Պատճառական կապ

Վնասներ

Մեղք

Հակաօրինական վարքագիծ

Հակաօրինական է համարվում այն վարքագիծը, որը խախտում է քաղաքացիական իրավունքի նորմերը, համակեցության կանոնները, բարոյականության նորմերը, գործարար շրջանառության սովորույթները:

Հակաօրինական է նաև այնպիսի վարքագիծը, որը չնայած չի խախտում իրավական նորմը սակայն հակասում է քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին և իմաստին:

Հակաօրինական վարքագիծը
կարող է արտահայտվել

Գործողությամբ

Անգործությամբ



Հակաօրինական են ճանաչվում այն գործողությունները, որոնք հակասում են իրավական նորմերին, համակեցության կանոններին գործարար շրջանառության սովորույթներին քաղաքացիական օրենսդրության ընդհանուր սկզբունքներին և իմաստին


Հակաօրինական անգործությունը ոչ թե հասարակ պասիվություն է այլ սուբյեկտի համար պարտադիր կատարման ենթակա գործողությունների չկատարում

Հակաօրինական անգործությունը պարտապանի կողմից այն գործողությունների չկատարումն է, որոնք նա պարտավոր է կատարել օրենքի, պայմանագրի կամ գործարար շրջանառության սովորույթների ուժով /կոմիսիոները կոմիտենտի համար ձեռքբերված իրում թերություններ կամ պակասորդ հայտնաբերելու դեպքում/

Վնասներ



ՀՀ քաղ. օր-ի 17 հոդ. համաձայն վնասներ են համարվում իրավունքը խախտված անձի ծախսերը, որը նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացած այն եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:



Պատճառական կապ

Քաղաքացիաիրավական պատասխանատվության պայման է ճանաչվում, երբ պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած պարտապանից պարտատերը պահանջում է վնասների փոխհատուցում

Իսկ երբ կիրառվում են պատասխանատվության այլ ձևեր (տուժանք, տուգանք, տույժ), ապա պատճառական կապի առկայությունը (կամ բացակայությունը), ինչպես նաև վնասների առկայությունը, ունի ֆակուլտատիվ բնույթ

Պատճառականությունը օբյեկտիվ իրականությունում՝ անկախ մարդկանց գիտակցությունից և ցանկությունից, գոյություն ունեցող կապն է այն երևույթների միջև, որոնցից մեկը հանդես է գալիս որպես պատճառ, մյուսը հետևանք

Հայտնաբերել իրավախախտման և առաջացած վնասների միջև գոյություն ունեցող անհրաժեշտ և օբյեկտիվ կապը

Պատճառականության հարցը լուծելիս վեճեր
լուծող մարմինները առանձնացնում են
երկու փաստ՝ իրավախախտում և հետևանք



Օրինակ անորակ արտադրանքի մատակարարում – վնաս

Վնասների հետ կապ ունեցող
բոլոր հանգամանքները

պարտավորությունը
չկատարելու կամ ոչ
պատշաճ կատարելու...

թե առաջացել է այլ
պատճառից

արտադրող ձեռնարկությունը ժամանակին արտադրանք չի
մատակարարում, և գնորդը նրանից տուժանք է գանձում...

Մեղքը

քաղաքացու կամ կազմակերպության վերաբերմունքն է իր գործողությունների (անգործության) և դրա հետևանքների նկատմամբ

ՀՀ քաղ. օր-ի 417 հոդ. համաձայն պարտապանը պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխա նատվություն է կրում մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ պարտավորությունը պատշաճ կատարելու համար ինքը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Մեղքը դրսևորվում է

Դիտավորությամբ

Անզգուշությամբ



Դիտավորության դեպքում անձը կանխամտածված չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր պարտավորությունը

Օրինակ վարձակալության պայմանագրով վարձատուն պատասխանատվություն է կրում գույքի այն թերությունների համար, որոնք նա դիտավորությամբ չի մատնանշել պայմանագիրը կնքելիս

- ☐ Անձը միտումնավոր ընտրում է հակասօրինական վարքագիծ
- ☐ ուղղակի և անուղղակի դիտավորությունները չեն սահմանազատվում

Անզգուշության դեպքում անձը պարտավորությունը կատարելու համար չի ցուցաբերում անհրաժեշտ շրջահայացություն և հոգածություն, չի օգտագործում իր բոլոր հնարատրությունները

Հասարակ

Կոպիտ

Հասարակ

երբ անձը կատարում է
շրջաջահայացության և
հոգածության նվազագույն
պահանջները

Կոպիտ

երբ անձը հաշվի չի առնում
շրջաջահայացության և
հոգածության նվազագույն
պահանջները

պահանջվող շրջաջահայացության և հոգածության
ցուցաբերումը պարզելու համար անհրաժեշտ են
որոշակի չափանիշներ

չափանիշներ

```
graph TD; A(չափանիշներ) --- B(օբյեկտիվ); A --- C(սուբյեկտիվ)
```

օբյեկտիվ

սուբյեկտիվ

ՀՀ քաղ. օր-ի 417 հոդ. համաձայն մեղքը
քաղաքացիաիրավական պատասխանատվության պայման է և՛
քաղաքացիների և՛ իրավաբանական անձանց համար

Իրավաբանական անձի մեղքը

Պարտավորության կատարմանն ուղղված
պարտապանի աշխատողների գործողությունները
համարվում են պարտապանի գործողություններ:

Պարտապանը պատասխանատու է այդ
գործողությունների համար, եթե դրանք հանգեցրել են
պարտավորությունը չկատարելուն կամ դրա ոչ
պատշաճ կատարելուն /ՀՀ քաղ. օր-ի 418 հոդ./

Օրենքով կամ պայմանագրով կարող է նախատեսվել նաև
պատասխանատվություն առանց մեղքի

ՀՀ քաղ. օր-ի 417 հոդ. 3-րդ կետը այդպիսի
պատասխանատվություն է նախատեսում գործարարների
համար

Գործարարի առանց մեղքի պատասխանատվությունը կիրառելի է, եթե կատարման անհնարինությունը անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով չի առաջացել

Պարտապանը պատասխանատու է երրորդ անձանց կողմից, որոնց վրա դրված է եղել կատարումը, պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե օրենքով սահմանված չէ, որ պատասխանատվությունը կրում է պարտավորությունն անմիջական կատարող երրորդ անձը:

ՊԱՐՏԱՊԱՆԸ պատասխանատու է ինչպես իր, այնպես էլ երրորդ անձի մեղքի համար: Նա պատասխանատվությունից կազատվի, եթե ապացուցի ինչպես իր, այնպես էլ պարտավորության կատարմանն իր կողմից ներգրավված երրորդ անձի անմեղությունը

Գործում է **մեղավորության կանխավարկածը** - պարտապանը համարվում է մեղավոր, քանի դեռ հակառակը չի ապացուցվել: Նա պարտավորության պատշաճ կատարման մասին իրազեկված լինելով, ավելի հեշտ կապացուցի իր անմեղությունը, քան տուժողը՝



Պատասխանատվության չափը



Վնասների լրիվ հատուցման սկզբունքը

Վնասների հատուցման ավելի պակաս չափ կարող է նախատեսվել օրենքով կամ պայմանագրով

Վնասների առկայության և դրանց չափի ապացուցման պարտականությունը դրված է տուժողի վրա

Վնասների չափը պետք է հիմնավորվի ճշգրիտ տվյալներով

Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենքով նախատեսված դեպքերում

Վնասները որոշելիս նկատի է առնվում պարտապանի կողմից պարտատիրոջ պահանջը կամովին բավարարելու օրվա գինը այն վայրում, որտեղ պարտավորությունը պետք է կատարվեր, իսկ եթե պահանջը կամովին չի բավարարվել, ապա դատարանի վճռի կատարման օրը գոյություն ունեցող գները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով

Գործնականում

- շատ հաճախ վնասների հատուցման հայցեր չեն հարուցվում
- սահմանափակվում են միայն իրական վնասները պահանջելով
- օրենքով կամ պայմանագրով վնասների լրիվ հատուցման սկզբունքը կարող է սահմանափակվել



Պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ
կատարած կողմից կարող է գանձվել նաև տուժանք

*Տուժանքի չափը որոշվում է օրենքով կամ պայմանագրով
և այն հաշվարկելը դժվար չէ*

Տուժանք պահանջելիս պարտատերը միայն ապացուցում է

- պայմանագրի խախտման փաստը

Նա պարտավոր չէ հիմնավորելու

- իր կրած վնասների փաստը,
 - իրավախախտման և վնասների միջև
պատճառական կապը,
 - իրավախախտողի մեղքը



Օրենսդրական տուժանքի չափը պայմանագրով կարող է
մեծացվել – պակասեցնել չի թույլատրվում

Պայմանագրով որոշվող տուժանքի չափը կողմերը կարող են
փոփոխել սեփական հայեցողությամբ

Այն դեպքերում, երբ վճարման ենթակա տուժանքն ակնհայ-
տորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետ -
ևանքներին, դատարանն իրավունք ունի դրա չափը պակա-
սեցնելու /ՀՀ քաղ.օր-ի 372 հոդ./

Դատարանն իրավասու է պակասեցնել և օրեքով և կողմերի
հանաձայնությամբ նախատեսված տուժանքի չափը

Դատարանը պատասխանատվության չափը՝ ներառյալ
տուժանքը և վնասների գումարը, կարող է պակասեցնել նաև
այն դեպքում, երբ տուժանքը, կորուստները կամ վնասներ
առաջացել են երկու կողմերի մեղքով / ՀՀ քաղ.օր-ի 420 հոդ./

Դատարանն իրավունք ունի պարտապանի
պատասխանատվության չափը
պակասեցնել նաև այն դեպքում, երբ
պարտատերը դիտավորյալ կամ
անզգուշորեն նպաստել է վնասների չափի
ավելացմանը կամ անհրաժեշտ միջոցներ չի
ձեռնարկել դրանք նվազեցնելու համար



Եթե վնասը դիտավորությամբ չի պատճառված, դատարանը
կարող է նվազեցնել քաղաքացու կողմից պատճառված
վնասի չափը՝ հաշվի առնելով վերջինիս գույքային
դրությունը/ՀՀ քաղ.օր-ի 1076 հոդ./

Քաղաքացիաիրավական պատասխանատվության չափը
օրենքով նախատեսված հանգամանքների առկայության
դեպքում կարող է ավելանալ

Պատասխանատվությունից ազատելու պայմանները

Պարտապանը ազատվում է պատասխանատվությունից, եթե բացակայում է օրենքով նախատեսված այն պայմաններից մեկը, որոնք անհրաժեշտ են պարտավորությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած պարտապանին պատասխանատվության ենթարկելու համար

Կոնկրետ պարտավորությունների խախտման համար պատասխանատվությունից ազատելու հիմքեր կարող են նախատեսվել օրենքով կամ պայմանագրով

Պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար պատասխանատվությունից ազատելու կամ այն սահմանափակելու մասին նախապես կնքված համաձայնությունը առոչինչ է

*Պարտավորական հարաբերությունների բնագավառում
սարտապանին պատասխանատվությունից ազատելու
հիմքերը*

կատարման անհնարինություն

```
graph TD; A[կատարման անհնարինություն] --> B[Պարտապանի մեղքով]; A --> C[Պարտապանի մեղքից անկախ]; C --> D[պատահարի]; C --> E[անհաղթահարելի ուժի];
```

Պարտապանի մեղքով

Պարտապանի մեղքից
անկախ

պատահարի

անհաղթահարելի
ուժի

Պատահար են համարվում այնպիսի

երևույթները, որոնք տեղի են ունենում

»« պարտապանի կամքից անկախ

»« առաջացումը վաղորոք կանխատեսել հնարավոր չէ
»«սուբյեկտիվորեն անկանխատեսելի և
անկանխելի երեվույթ է

Դրանք հնարավոր է կանխել, եթե անձը գիտենա դրանց
առաջանալու մասին

Անհաղթահարելի ուժ է համարվում

որակյալ պատահարը
աչքի է ընկնում - անկասելիությանմբ -
- արտակարգությանմբ



Օբյեկտիվ անկասելիությունը նշանակում է, որ դրանց

(ջրհեղեղ, փոթորիկ...) վնասակար հետևանքները միշտ չէ, որ կարելի է կասեցնել, եթե անգամ հայտնի է դրանց տեղի ունենալու մասին

Արտակարգության հատկանիշն ընդգծում է, որ այդ երևույթները համեմատաբար սակավ են տեղի ունենում և չեն մտնում այն սովորական երևույթների շրջանակի մեջ, որոնցով ընթանում է մարդկանց բնականոն գործունեությունը

Արտակարգ և անկանխելի
կարող են համարվել

բնական երևույթները
երկրաշարժ, փոթորիկ,
ցունամի

հասարակական երևույթները...
պատերազմ, համաճարակ,
գործադուլ...

Որպեսզի երևույթը համարվի ԱՆՀԱՂՓԱՀԱՐԵԼԻ Ուժ
այն պետք է լինի և՛ արտակարգ և՛ անհաղթահարելի

Դրանցից որևէ մեկի բացակայության դեպքում երևույթը
անհաղթահարելի ուժ համարվել չի կարող:

Օրինակ, եթե ջրհեղեղը քանդել է կամուրջը, բայց բեռը կարելի է տեղ
հասցնել այլ ճանապարհով

Գործարարների հարաբերություններում
արտակարգ չեն համարվում պարտապանի
կոնտրագենտի կողմից պարտավորությունների
խախտումը, շուկայում անհրաժեշտ ապրանքների
կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական
միջոցների բացակայությունը





Կատարման անհնարինություն կարող է առաջանալ նաև

պետական իրավասու մարմինների կողմից պարտավորությունների կատարումն արգելելու կամ սահմանափակելու հետևանքով

- որոշակի ապրանքների արտադրությունն արգելելու

- արտադրության թույլտվությունը (լիցենզիան) հետ վերցնելու հետևանքով



Պարտապանին պատասխանատվությունից ազատելու հիմք է նաև պարտատիրոջ մեղքը

- *հրաժարվել է պատշաճ կատարումն ընդունելուց*
- *չի կատարել գործողություններ, որոնց չկատարելու դեպքում պարտապանը չէր կարող կատարել իր պարտականությունը*
- *պարտատերը կատարումն ընդունելուց հրաժարվում է ստացական տալուց, պարտքային փաստաթուղթը վերադարձնելուց կամ վերադարձնելու անհնարինության մասին ստացականում նշում կատարելուց /հոդ. 424/*

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Պարտավորությունների դադարման
հասկացությունը և դրա տեսակները

Պարտավորությունները դադարում են, երբ որոշակի
հանգամանքների ուժով վերանում են մասնակիցների
միջև գոյություն ուեցող կապերը և դրանց հիման վրա
ձևավորված իրավունքներն ու պարտականությունները
կորցնում են իրենց նշանակությունը

Պարտավորական հարաբերությունները դադարում են
որոշակի հանգամանքների՝ իրավաբանական փաստերի
առկայության հետևանքով

Պարտավորությունների դադարման հիմքերը
միատեսակ կիրառություն չունեն

մի մասն ունի ընդհանուր
նշանակություն
և կիրառելի է ցանկացած
պարտավորության
դադարման համար

մյուսները կիրառելի
են միայն
պարտավորություն-
ների առանձին
տեսակների
դադարման դեպքում

Պարտավորությունների դադարման
ընդհանուր հիմքերը նախատեսված են ՀՀ քաղ.
օր-քի 27 գլխում

Ընդհանուր հիմքերից զատ

պարտավորություններ են
դադարեցնում

- ✓ հայցային վաղեմության ժամկետի լրանալը
- ✓ միակողմանի կամահայտնությունը
- ✓ քաղաքացուն անհայտ բացակայող, անգործունակ, սահմանափակ գործունակ ճանաչելը և այլն

Քաղ. օր. 27 գլխում նախատեսված
են հետևյալ հիմքերը

Կատարում

Նորացում

Պետական կամ տեղական
ինքնակառավարման
մարմնի ակտի հիման վրա

Հրաժարագիր

Պարտքի ներում

Քաղաքացու մահը

Հաշվանցում

Կատարման
անհնարինություն

Պարտապանի և պարտատիրոջ
համընկնումը

Իրավաբանական անձի
լուծարումը

Պարտավորությունների դադարման ընդհանուր հիմքերը



Պարտավորությունների պատշաճ կատարումը

- ✓ ամենատարածված հիմքը
- ✓ ցանկացած կատարում չի դադարեցնում

Պարտավորության դադարումը կատարման միջոցով սովորաբար հաստատվում է գրավոր փաստաթղթով


Քանի դեռ պարտավորությունը չի կատարվել,

պարտքային փաստաթուղթը պետք է գտնվի պարտատիրոջ մոտ: Պարտքային փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը, քանի դեռ հակառակը չի ապացուցվել

Պարտատիրոջ կողմից ստացական տալուց, պարտքային փաստաթուղթը վերադարձնելուց կամ այն վերադարձնելու անհնարինության մասին ստացականում նշելուց հրաժարվելու դեպքերում, պարտապանն իրավունք ունի կասեցնել կատարումը: Այդ դեպքերում պարտատերը համարվում է կետանցող:

Թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղ. գործով ՀՀ վճռաբեկ դատարանի
28.06.2012թ. որոշում

ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծությանը՝ դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ օրենսդիրը պարտատիրոջ վրա պարտականություն է դրել պարտքի կատարումն ընդունելիս պարտապանի պահանջով կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին նրան ստացական տալ, իսկ պարտապանի կողմից պարտատիրոջն ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ տրված լինելու դեպքում՝ պարտապանին վերադարձնել այդ փաստաթուղթը, դրա անհնարինության դեպքում՝ այդ մասին նշել իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Ընդ որում, այլ բան ապացուցված չլինելու դեպքում նշված փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է պարտավորության դադարումը:



**Թիվ ԵԱՔԴ/0704/02/11 քաղ. գործով ՀՀ վճռաբեկ դատարանի
08.05.2014թ. որոշում**

Պարտքային փաստաթղթի բնօրինակի բացակայությունը, ելնելով գործի հանգամանքների առանձնահատկություններից, ևս կարող է վկայել պարտավորության դադարման փաստի մասին:

**Թիվ ԵԷԴ/1515/02/12 քաղ. գործով ՀՀ վճռաբեկ դատարանի
08.05.2014թ. որոշում**

Վճռաբեկ դատարանի դիտարկմամբ պարտավորության մասնակի կատարման պարագայում դատարանները պետք է պարտատիրոջը պարտավորեցնեն պահանջվող ծավալով պարտավորության առկայության փաստը հիմնավորել բացառապես պարտքային փաստաթղթի բնօրինակով, իսկ դրա անհնարինության դեպքում կրել դրա բացակայության բացասական հետևանքները:

Հրաժարագին Իմաստը կայանում է նրանում,

որ պարտապանը պարտատիրոջ համաձայնությամբ
հնարավորություն է ստանում պարտավորությունը
դադարեցնել ոչ թե պարտավորության առարկան հանձնելու
միջոցով, այլ դրա փոխարեն դրամ վճարելու, այլ գույք
հանձնելու, աշխատանք կատարելու կամ ծառայություն
մատուցելու միջոցով

Հրաժարագնի միջոցով իրականացնելով
կատարումը՝ պարտապանն ազատվում է
պարտքից

Հրաժարագին տրամադրելը
անհրաժեշտ է տարբերել

*Պարտավորության
նորացումից*

*Պարտավորության
փոփոխությունից*

Հաշվանցում միջոցով լրիվ կամ մասնակի դադարում են միատեսակ հակնդեմ այն պահանջները, որոնց կատարման ժամկետը կամ լրացել է, կամ սահմանված չէ, կամ որոշված է պահանջի պահով



Հաշվանցումը կարող է կատարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում

- կողմերի պահանջները պետք է լինեն հանդիպական,
- պարտավորությունները լինեն միատեսակ
- պարտավորությունների կատարման ժամկետը կամ լրացել է կամ սահմանված չէ, կամ որոշված է պահանջի պահով:

Հաշվանցում կատարելու համար բավարար է մեկ կողմի
հայտարարությունը

Հաշվանցվող պարտավորությունը

հավասար

անհավասար

Հաշվանցմամբ դադարում են ինչպես
քաղաքացիների այնպես էլ իրավաբանական
անձանց միջև գոյություն ունեցող
պարտավորությունները

- իրավաբանական անձանց միջև - առավել հաճախ
բանկային գործառնություններում
- հաշվանցումը կիրառելի է նաև պահանջը զիջելիս

Պահանջի հաշվանցում չի թույլատրվում, եթե

- մյուս կողմի դիմումով պահանջի նկատմամբ ենթակա է կիրառման հայցային վաղեմության ժամկետ և այդ ժամկետը լրացել է
- դրանք վերաբերում են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցմանը.
- դրանք վերաբերում են ալիմենտի բռնագանձմանը
- նախատեսված է օրենքով կամ պայմանագրով
/բաժնետոմսի կամ բաժնեմասի արժեքը վճարելը/

Համընկնում պարտատերն ու
պարտապանը համընկնում են
մեկ անձի մեջ

նույն անձը չի կարող ինքը իր
նկատմամբ լինել և պարտատեր
և պարտապան

Կարող է տեղի ունենալ

- ❖ Ընդհանուր իրավահաջորդության
հետևանքով
- ❖ Իրավաբանական անձանց միանալու կամ
միաձուլվելու դեպքում



*Օրինակ վարձակալը գնում է վարձակալված գույքը,
բաժնետիրական ընկերությունը մարելու համար
բաժնետերերից հետ է գնում բաժնետոմսերը...*

Պարտավորության նորացում (նովացիա)

Նորացման դեպքում կողմերի միջև գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը դադարում է նույն անձանց միջև մեկ այլ պարտավորությամբ փոխարինելու մասին համաձայնությամբ, որով նախատեսվում է պարտավորության կատարման այլ առարկա կամ կատարման այլ եղանակ / ՀՀ քաղ. օր-քի 430 հոդ. /

*Նորացվել կարող է ցանկացած պարտավորություն,
բացառությամբ կյանքին կամ առողջությանը
պատճառված վնասի և ալիմենտի*

Իրավաբանական անձանց փոխհարաբերություններում սակավ է կիրառվում՝ հիմնականում դրամական հաշվարկներում, փոխադարձ պահանջների սալդոյի դեպքում



*Նովացիայի անհրաժեշտ պայման է, որ և՛ սկզբնական, և՛
նոր պարտավորությունը լինեն վավերական*

Եթե օրենքով նախատեսված որևէ հիմքով սկզբնական
պարտավորությունը պետք է ճանաչվի անվավեր, ապա
անվավեր կճանաչվի նաև նորը

Եթե անվավեր է միայն նոր պարտավորությունը, ապա
նորացումը համարվում է չկայացած

Նորացումը դադարեցնում է սկզբնական պարտավորության
հետ կապված լրացուցիչ պարտավորությունը, եթե կողմերի
համաձայնությամբ այլ բան չի նախատեսվում

Նորացման հետևանքով սկզբնական պարտավորությամբ
անցած հայցային վադեմության ժամկետն ընդհատվում է

Պարտքի ներում



ցանկացած պարտատեր իրավասու է պարտապանին ազատել ցանկացած պարտավո ըությունից, եթե դա չի հակասում օրենքին

Պարտքը ներելու համար միայն պարտատիրոջ կողմից պահանջից միակողմանի հրաժարվելը բավարար չէ:

Պարտավորությունը միմյանց կապում է անձանց և կարող է դադարել միայն նրանց փոխադարձ համաձայնությամբ

Պարտքի ներումը երկկողմանի անհատույց գործարք է

Նվիրատվության եղանակ, որի նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղ. օր-քի 598, 599 հոդ. նախատեսված արգելքներն ու սահմանափակումները

Կատարման անհնարիներություն

այնպիսի իրավիճակ է, որը սուբյեկտներին զրկում է իրավահարաբերության բովանդակությունը կազմող գործողությունները կատարելու հնարավորությունից

Կատարման անհնարիներությամբ պարտավորությունները դադարում են, եթե նման իրավիճակն առաջացել է այնպիսի հանգամանքներից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ



Անհրաժեշտ է տարբերել

**Պատահական
անհնարինություն**

անհաղթահարելի ուժի,
ցանկացած այլ հանգա-
մանքների որոնց
առաջանալը պարտապանը
չէր կարող և պարտավոր էլ
չէր կանխատեսել

**Ոչ պատահական
անհնարինություն**

պարտապանը դիտավորու-
թյամբ կամ անզուշուրյամբ
առաջացրել կամ չի կանխել
այն հանգամանքները,
որոնք կատարումը դարձրել
են անհնարին


*Եթե կատարման անհնարինությունը հետևանք է այնպիսի
հանգամանքների, որոնց համար պարտապանը
պատասխանատու է, ապա առաջանում է տուժանք
վճարելու, վնասներ փողհատուցելու պարտականություն*

Պարտավորությունների դադարման հիմք է պատահական անհնարինությունը

սակայն կախված հարաբերությունների բնույթից, մասնակիցների կարգավիճակից, պատահական անհնարինությունը կարող է չդադարեցնել պարտավորությունը, համաձայն ՀՀ քաղ. օր-ի. 417 հոդ. ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս ...



Կատարման անհնարինությունն առաջացնող իրավաբանական փաստերի ցանկ օրենքով նախատեսված չէ



ԻՐԱՎԱԿԱՆ անհնարինությունն առաջա-
նում է, երբ իրավասու պետական
մարմիններն արգելում են կատարել
պարտավորության բովանդակությունը
կազմող գործողությունները



ՖԻԶԻԿԱԿԱՆ անհնարինությունը հետևանք է այնպիսի
հանգամանքների, որոնք անհնարին են դարձնում
պարտավորության կատարումը

Օրինակ՝ առարկայի ոչնչանալը - արտադրանք
թողարկելու, առաքելու անհնարինությունը

Ֆիզիկական արգելքների մի մասը պարտավորությունների
դադարման հիմք չեն: ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ հարաբերությունն-
ներում պարտավորությունների դադարման հիմք չեն
ՀՀ քաղ. օր-քի 417 հոդ.



Եթե պետական կամ տեղական
ինքնակառավարման մարմնի ակտի
հրապարակման հետևանքով
պարտավորությունը կատարելը լրիվ
կամ մասնակի դադնում է անհնարին,
պարտավորությունը լրիվ կամ
համապատասխան մասով դադարում է:
Դրա հետևանքով վնաս կրած կողմերը,
իրավունք ունեն պահանջել հատուցելու
վնասները

Սահմանված կարգով պետական կամ տեղական
ինքնակառավարման մարմնի այն ակտն անվավեր
ճանաչելու դեպքում, որի հիման վրա պարտավորությունը
դադարել է, պարտավորությունը վերականգնվում է, եթե
այլ բան չի բխում կողմերի համաձայնությունից կամ
պարտավորության էությունից, և դրա կատարումը
պարտատիրոջ համար չի կորցրել իր հետաքրքրությունը

Քաղաքացու մահը

✓ ընդհանուր առմամբ չի դադարեցնում

✓ դադարեցնում է պարտավորությունը, եթե իրավունքներն ու պարտականությունները սերտորեն կապված են պարտատիրոջ կամ պարտապանի անձի հետ



Պարտապանի մահով պարտավորությունը դադարում է, եթե կատարումը չի կարող տեղի ունենալ առանց նրա անձնական մասնակցության կամ պարտավորությունը այլ կերպ անխզելի կապված է նրա հետ

Պարտատիրոջ մահով պարտավորությունը դադարում է, եթե կատարումը նախատեսված է անձամբ պարտատիրոջ համար կամ պարտավորությունը այլ կերպ անխզելի կապված է նրա հետ

Իրավաբանական անձի լուծարումը

Պարտավորությունները դադարում են
իրավաբանական անհի (պարտապանի
կամ պարտատիրոջ) լուծարմամբ

/ ՀՀ քաղ. օր-ի 435 հոդ. /

Գոյություն ունեն պարտավորություններ, որոնք օրենքի
ուժով պահպանվում են նաև իրավաբանական անձի
լուծարման դեպքում

ՀՀ քաղ. օր-ի 1086 հոդ. 2-րդ կետի համաձայն կյանքին կամ
առողջությանը պատճառված վնասի համար սահմանված
կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական
անձի լուծարման դեպքում համապատասխան վճարներն
օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված
կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին
վճարելու համար:

